ԼՈՒՍԱՎԱՌ

1980

Դ

Ոչ146

ՖԳ



ԼԷ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Հատոր

1980

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1980 թ. ապրիլի 6)

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Սիրելի հավատացյալներ,

Այո՛, ճշմարտապես հարյավ Քրիստոս: Հաղթանակի օրն է այս փառազարդ: Հաղթության օրը՝ արդար ու բարի ուժերի ընդդեմ մահվան ու մեղքի: Ցնծացեք և ուրախ եղեք և մեկդ մյուսին ողջունեցեք եղբայրական սիրով, հավերժական կյանքի հույսը ձեր սրտերի մեջ վառ պահած: Եվ երկրային կյանքն ու ձեռաց գործերը ձեր թող լուսավորվեն ճառագայթումովը հարության ուրախության:

Շատ դարեր են անցել այն հրաշք օրերից, երբ հեռավոր Երուսաղեմ քաղաքում, մարդացյալ Որդին Աստուծո Հիսուս աշխարհ եկավ, ցույց տալու համար ճանապարհը մարդու փրկության՝ մեղքի ու չարիքների կապանքներից: Արդարև, Հիսուս քարոզեց սեր և գութ մեր բոլոր նմանների հանդեպ, նույնիսկ չար կամեցողների նկատմամբ: Հիսուս քարոզեց արդարություն և հավասարություն: Հիսուս քարոզեց աղքատություն և հրավեր կարդաց հարուստներին՝ բաժանել իրենց ունեցվածքը կարոտյալներին: Հիսուս պատգամ տվեց մարդկանց լինել մեկը մյուսին սպասավոր, մեկը մյուսին հնազանդ՝ երկյուղովը Աստուծո: Հիսուս երանի տվեց բոլոր խաղաղություն անողներին: Հիսուսի մեջ մարդը, իր մարդկային վեհագույն կատարելության հասավ, որովհետև Աստված իջել էր նրա հողեղեն բնության մեջ:

Աշխարհը սակայն չճանաչեց նրան, չհասկացավ նրան, մանավանդ իր ժամանակի Աստուծո անունով խոսող օրենքի մարդիկ, իր ժամանակի իշխանավոր մարդիկ, իր ժամանակի արծաթ ու ոսկի դիզած մարդիկ:

Այդպես է որ այդ աշխարհը հալածեց Հիսուսին, մեղադրեց նրան որպես հաստատված օրենքն ու կարգերը քանդողի, և դատապարտեց նրան մահվան:

Հիսուս խաչափայտի վրա տանջալից մահով մեռավ: Մեռավ առանց նզովքի, առանց տրտունջի: Մեռավ գթալով մարդկանց, ներելով նրանց և աղոթելով բոլորի համար, իր վրա վերցնելով ամենքի մեղքերը: Հիսուսի մահով թվում էր թե փրկության ամեն հույս փուլ էր եկել, թվում էր թե նրա խոսքը եղել էր լոկ կորած ձայն անապատի մեջ...

Բայց ճշմարտությունն ու արդարությունը առկայծում էին տակավ խավարը պատած աշխարհում այդ հին: Մի բուռ խոնարհ ու պարզ մարդիկ, մի շապիկ ունեցող ընչազուրկ մարդիկ, անհայտ մի արքայություն երազող մարդիկ, հավատքով վճիտ ու կամքով վճռական, որոնք իրենց սրտերը բացել էին մեծ Վարդապետին, հասկացել էին ու սիրել նրան, չհավատացին նրա մահվան, և տեսնելով նրա գերեզմանը դատարկ, ցնծագին աղաղակեցին՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և մեզ զկեանս պարգևեաց»:

Այդ ստուգությամբ, Հիսուսի աշակերտներն ու նրանց հետևորդները ուխտեցին իրենց բարի Վարդապետի խոսքը տանել աշխարհին համայն, սարածել հորիզոնից հորիզոն իբրև մեծ ավետիս փրկության: Իրականանում էր Հիսուսի մարգարեությունը թե՝ «Ես հաղթեցի աշխարհին»:

Սիրելի հավատացյալներ, այդ օրերից թեև անցել են երկու հազար տարիներ, բայց հիշատակն ու խորհուրդը Հիսուսի ծննդյան, խաչելության և հարության, մնացել են լուսավոր տեսիլքներ, որոնք առաջնորդող ջահեր են հանդիսանում նաև այսօր, բոլոր նրանց համար, որոնք, ինչպես առաջին դարերի քրիստոնյաները, տենչանքն են ապրում իրենց հոգիների փրկության, տքնում ու մաքառում են ի խնդիր արդարության և խաղաղության կենսագործման երկրի վրա, երազում են ու քարոզում մարդկանց եղբայրություն, ժողովուրդների համերաշխություն:

Այդ անմար տենչը, այդ փրկարար տեսիլքը, այդ երբեք չհանգող լավատեսությունը հիմնվում են մեզ՝ քրիստոնյաներիս համար, այն գերագույն ստուգության վրա թե՝, այո՛, ճշմարտապես «յարեաւ Քրիստոս ի մեռելոց»:

Թող ամեն տարի, ամեն սրտի մեջ ծագի ուրախությունը հարության և զորանա հավատքը՝ ճշմարտության, արդարության ու խաղաղության հաղթության:

Հարության խորհուրդը մի փորձեք թափանցել միայն ձեր բանականությամբ: Մանավանդ ձեր հոգիների հուզական աշխարհն է, սրտով խորհրդանշված, որ կարող է բարձրանալ հարության հրաշքի լույսին: Այն սիրտը, որի առաջին զարկով սկիզբ է առնում մարդու կյանքը, այն սիրտը, որ կարող է արև դառնալ և մի բաժակ երգ, այն սիրտը, որ սիրո սափոր է և բարու աղբյուր, այն սիրտը, որ գիտի գտնել դեպի երկինք տանող ճանապարհը: Այս իմաստով, սիրտն է հատկանշում մարդ էակը, մարդկայինը:

Սիրելի հավատացյալներ, մեր օրերում, երբ աշխարհը կանգնած է բազում ծանր տագնապների և անարկու երկյուղների առաջ, երբ հույսի աստղերը թվում է թե թափվում են մարդկության հոգու երկնքից, երբ բազում ժողովուրդների խոնարհ զանգվածները հայցում են ավելի լույս, ավելի հաց և միշտ խաղաղություն, մենք՝ քրիստոնյաներս աշխարհի բոլոր ծագերից, պետք է միանանք Քրիստոսով ու նրա Ավետարանով և մեր աղոթքն ու ձեռաց գործերը միացնենք արդարության ու խաղաղության ուժերին, փրկելու համար մարդկությունը նոր պատերազմների ավերումներից ու տառապանքներից:

Այս աղոթքով, այս պատգամով դիմավորում ենք մենք Քրիստոսի Հարության ավետիսը, մանավանդ մենք՝ հայերս, անցյալում բազում անգամներ խաչված մի ժողովրդի զավակներս, մեր վերածնված ու ծաղկող հայրենիքի անվտանգությունը և բարգավաճումը կամենալով ապահովված տեսնել, աշխարհի խաղաղության ու ժողովուրդների համերաշխ գործակցության փրկարար գաղափարների վերջնական հաղթանակով:

Որևէ պատերազմ՝ կործանումն ու բնաջնջումն է աշխարհին: Որևէ պատերազմ կարող է ողբերգություն լինել նաև մեր ժողովրդի ու մեր երկրի համար, ամենայն հայոց Մայր Հայաստանի, որի արդի ապահով ու խաղաղ կյանքի ամրապնդումը, որի բարօրության ու ծաղկմանը սատարելը անխտիր բոլոր հայերի սրբազան պարտքն է, հայ ժողովրդի «ամեն բանից վեր»-ն է, մեր ազգային բոլոր արդար իղձերի կենսագործման միակ հույսն ու ապավենն է:

Մենք հավատում ենք թե մեր ժողովրդի բոլոր զավակները ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, ուղիղ և հստակ են հասկանում այս ճշմարտությունը. այս հրամայականը, որով անձնատուր չեն կարող լինել անհարազատ ազդեցությունների և շփոթ կողմնորոշումների:

Սուրբ գրական Արարատի ստորոտին, իր ազգային պետության դրոշի ներքո այսօր ապրող ու շնչող, միշտ կառուցող, հարատև աճող, զարգացող մեր ժողովրդի խաղաղ ապրելու և գոյատևելու իրավունքը, բոլորիս համար, բոլոր հայերի համար թող լինի գերագույն օրենք, սրբազան պատգամ, այժմ և բոլոր գալիք օրերին:

Աստվածակառույց Սուրբ Էջմիածնից, սիրեցյալ հայ հավատացյալներ, ձեզ բոլորիդ բերում ենք ավետիսը Հիսուսի լույս Հարության, մաղթանքով ջերմաձայն որ ձեր սրտերը լցվեն Հարության ուրախությամբ և հույսով կյանքի հավերժության:

Օրհնյալ լինեք շնորհներովը հարուցյալ Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի, այժմ և հավիտյան. ամեն:





ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՎ ԻՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, մայր դաստիարակը համայն հայ քրիստոնյա ժողովրդի, իր պատմական առաքելության ողջ ընթացքում մնացել է հաստատ ու հավատարիմ Քրիստոսի Ավետարանին, սուրբ ավանդությանց և Տիեզերական առաջին երեք ժողովների ուսմունքին, ժողովներ, որոնք վերջնապես ամուր հիմքերն էին դրել ուղղափառ վարդապետության:

Իր պատմական առաքելության ողջ ընթացքում Հայաստանյայց Եկեղեցին նույնքան հաստատ ու հավատարիմ է մնացել իր ժողովրդին, նրա ոգեկան մղումներին, նրա իմացական որոնումներին, նրա բարոյական ու մշակութային հանճարին, նրա մաքառումներին վասն արդարության ու ազատության, շատ հաճախ ինքը մեր Մայր Եկեղեցին հանդես գալով որպես դրոշակակիր ու մարտնչող ի խնդիր այդ իդեալների կենսագործման:

Իր պատմական առաքելության ողջ ընթացքում Հայաստանյայց Եկեղեցին մնացել է ու գործել հայոց կյանքի սահմաններից ներս, միայն հայ ժողովուրդը նկատելով իր հոտը, երբեք չփորձելով ոտնձգություններ կատարել քույր Եկեղեցիների փարախից ներս: Հայ Եկեղեցին չի զբաղվել մարդորսությամբ: Հայ Առաքելական Եկեղեցին ի սկզբանե եղել և մնացել է հայ ժողովրդի Եկեղեցին, եղել և մնացել է ազգային Եկեղեցի: Ազգ և Եկեղեցի հայոց մեջ կազմել են մեկ մարմին և մեկ հոգի, մեկ առաքելություն և մեկ ճակատագիր:

Այսպես է, որ Հայաստանյայց Եկեղեցին եղել ու մինչև այսօր մնացել է նաև պաշտպան հայրենյաց: Այսպես է, որ Հայաստանյայց Եկեղեցին իր ժողովրդի հետ 1915-ին գերեզման է իջել ու երեք տարիներ հետո Սարդարապատի հերոսամարտով իր ժողովրդի հետ հարություն առել, մի հերոսամարտ, որի ոգեշնչող ուժն է հանդիսացել. Սուրբ Էջմիածինն իր Հայրապետով ու քաջարի միաբաններով:

Իսկ քառորդ դար անց նույն մեր Մայր Եկեղեցին Սուրբ Էջմիածնի օրհնությամբ, նույն ոգեշնչումով և «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունով թև-թիկունք է եղել իր ժողովրդին՝ ի խնդիր Հայրենական մեծ պատերազմի հաղթությամբ պսակման:

Հայաստանյայց Եկեղեցին, սակայն, միաժամանակ նկատել է իրեն անբաժանելի մասը քրիստոնեական ընդհանրական Եկեղեցու, կամեցել է միշտ եղբայրական հաղորդակցության մեջ պահել իրեն քույր Եկեղեցիների հետ և հեռու է եղել անհանդուրժող ու այլամերժ ձգտումներից, մնացել է միշտ լայնախոհ ու ողջամիտ և երբեք մոլեռանդ, առաջնորդվելով՝

«Միութիւն ի կարևորս,
Ազատութիւն յերկրայականս,
Սէր յամենայնի» իրավ ավետարանական սկզբունքներով:
Մեր Մայր Եկեղեցին երբեք չի հետապնդել ուրիշներին պարտադրել «իր ճշմարտությունը» զի իր հոգու լույսով կարողացել է հասկանալ, թե հոգեվոր կյանքի տիեզերքում այնքան ճշմարտություններ կարող են լինել, ինչքան հոգևոր իրավ ապրումներ:

Ինչքան երջանիկ պիտի լիներ մարդկությունը, եթե ազատվեր «մեկ ճշմարտության» երկրպագուներից:

Այսպիսով մեր Մայր Եկեղեցին վաղուց, շատ վաղուց հարազատ արդիական էկումենիկ ոգով է ըմբռնել հարաբերությունները՝ պատմականորեն զարգացած բոլոր քույր Եկեղեցիների միջև:

Հայաստանյայց Եկեղեցին դիմել է ինքնապաշտպանության, միմիայն երբ այլ Եկեղեցիներ, դրդված փառասիրական և իշխանամոլության մղումներից և կամ քաղաքական շահերից, երկնից արքայության մենատերերը լինելու հավակնությամբ, փորձել են պառակտել մեր ժողովուրդն ու Եկեղեցին և բաժան-բաժան անել նրան, եղբայրը եղբոր դեմ հանելով և թշնամանքների որոմ սերմանելով մեր բարի քրիստոնյա զավակների ծոցում: Առանց այդ էլ փոթորկահույզ մեր ազգային պատմությունը քանի-քանի անգամներ թատերաբեմ է հանդիսացել նման ողբերգությանց, որոնց արդյունքն է եղել այն իրողությունը, որ հայ ազգի Մայր Եկեղեցուց բաժանվել են նրա զավակներից ոմանք ու միացվել արևմտյան Եկեղեցիների, երբեմն նույնիսկ բռնի միջոցներով, զինու զորությամբ, ինչպիսին է եղել Լեհաստանի և Թրանսիլվանիո հայոց պարագան 18-րդ դարի սկզբներին: Սակայն Հայ Եկեղեցուն ընդհանրապես հաջողվել է ինքնապաշտպանության դիմել, և այսպիսով հայ ժողովրդի լայն զանգվածները, առաջնորդված իրենց ազգային առողջ բնազդով, կարողացել են ուղիղ կողմնորոշվել, մնալով մինչև այսօր հավատարիմ իրենց Մայր Եկեղեցուն, ավելի քան իննսուն տոկոսի համեմատությամբ:

Այնուամենայնիվ Հայաստանյայց Եկեղեցին, իրեն հատուկ լայնախոհությամբ, մի տեսակ հաշտվել է տխուր անցյալից ժառանգված այդ կացության հետ և այսօր, իր ծոցից բաժանված եղբայրների ու քույրերի վրա չի նայում ծուռ աչքով և նույնիսկ չի փորձում աշխատանք տանել նրանց վերադարձնելու Մայր Եկեղեցու գիրկը, ինչ որ բնական և ցանկալի գործ պիտի լիներ ազգային միասնության ամրապնդման տեսակետից: Սակայն նման ձգտում գոնե մեր դարաշրջանում չի դրսևորվել:

Մայր Աթոռս, հատկապես վերջին տասնամյակներին, Տ. Տ. Վազգեն կաթողիկոսի օրոք, առաջնորդվել է հարազատ եղբայրական սիրո մտորումներով, խտրություն չդնելով առաքելական, կաթոլիկ և ավետարանական հայերի միջև: Վեհափառ Հայրապետը Իր բոլոր ուղևորությունների ընթացքում այցելել է նրանց եկեղեցիները և Սուրբ Էջմիածնից բերած Իր օրհնություններն է բաշխել նաև կաթոլիկ և ավետարանական մեր քույրերին ու եղբայրներին: Նորին Սրբությունը բազմիցս հայրական սիրով ու գնահատանքով այցելել է Սուրբ Ղազարի և Վիեննայի Մխիթարյան հայրերին, իսկ Եղեռնի հիսնամյակի առթիվ պաշտոնապես հրավիրել է կաթոլիկ հայոց Ամենապատիվ պատրիարքին և հայ ավետարանական եկեղեցյաց վերապատվելի ղեկավարներին, իբրև Իր ցանկալի հյուրերը:

Մայր Աթոռիս և Հայաստանյայց Եկեղեցու մյուս երեք նվիրապետական

Աթոռների ամսաթերթերում երբեք լույս չեն տեսել հոդվածներ կամ ուսումնասիրություններ, որոնք կարողանային վիրավորել զգացումները մեր Եկեղեցու ծոցից բաժանված եղբայրներին: Մեր Եկեղեցին և մեր Աթոռները, և մեր հոգևորականները գոնե վերջին տասնամյակներին չեն հրատարակել որևէ աշխատասիրություն, որ պղտորեին մեր Մայր Եկեղեցու բարի հարաբերությունները հայ կաթոլիկ և հայ ավետարանական եղբայրների հետ:

Մենք հույժ ուրախ ենք հաստատելու այս իրողությունը, որ արտահայտությունն է մեր Մայր Եկեղեցու իրավ ավետարանական ոգու, իրավ ազգային գիտակցության և էկումենիկ ուղիղ կեցվածքի:

Բայց տխրությամբ ստիպված ենք հաստատել, թե նույնը չի կարելի ասել՝ պատասխանատու դիրքեր գրավող մի քանի հայ կաթոլիկ հոգևորականների մասին:

Այսպես՝ վերջին տարիների ընթացքում հետզհետե լույս տեսան՝ Հայր Սահակ Կոգյան եպիսկոպոսի «Հայոց Եկեղեցին» ստվար հատորը[1], Հայր Կարապետ Ամատունի եպիսկոպոսի Ոսկան Երևանցու[2] և Հայոց եկեղեցու[3] մասին գրած հայերեն և ֆրանսերեն գրքերը, և «Լևոնյան» վարժարանի ղեկավար Հայր Ներսես Սեթյանի Հայ կաթոլիկ Եկեղեցու վերաբերյալ[4] հոդվածը գերմաներեն լեզվով:

Այս բոլոր հրատարակությունների մեջ սև թելի պես անցնում է թշնամանքի ոգին Հայաստանյայց Եկեղեցու նկատմամբ, բոլորի ձգտումը լինելով հեղինակազրկել Հայաստանյայց Եկեղեցին և ի մասնավորի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Նրանք, միակողմանի և չարափոխված վկայություններով, հատկապես փորձում են ժխտել մեր Մայր Եկեղեցու առաքելական ծագումը, նրա ինքնագլուխ ու անկախ լինելու պատմական իրողությունը և Սուրբ Էջմիածնի ընդհանրական հայրապետական Աթոռի վավերականությունը:

Բացի այդ, Հայր Սահակ Կոգյանի վերոհիշյալ գիրքը նաև մի անխիղճ նկրտում է՝ հոշոտելու պայծառ հիշատակը Կ. Պոլսի մեծագործ Օրմանյան պատրիարքի, որին իր ժամանակին պատասխանեցին «Էջմիածին», «Հասկ» և «Սիոն» ամսագրերը:

Ինչո՞ւ այս անհոգի արշավանքը հայ ժողովրդի Մայր Եկեղեցու դեմ, ոչ միայն հայերեն, այլ նաև օտար լեզուներով:

Այնպիսի մի պատմական ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը, հազիվ ազատված մահվան անդունդից, իր նոր հայրենիքն է կերտում իր պատմական հողերի մի մասի վրա, Սարդարապատի նակատամարտով հազար տարիների գերության շղթաները փշրած, երբ սփյուռքի հայությունը մահու-կենաց հերոսական պայքար է մղում իր հոգևոր ու ազգային ինքնությունը պահպանելու ի խնդիր, երբ սփյուռքում որոշ երկրներում մեր ժողովուրդը ահավոր պատուհասների առաջ է կանգնած, երբ հայ ժողովուրդը ավելի քան երբեք հրամայականի առջև է գտնվում պահպանելու և ավելի ու ավելի ամրապնդելու իր ներքին միասնությունը, իր ներքին անբաժանելիությունը, երբ բոլոր քրիստոնեական Եկեղեցիները և նրանց պետերը, Հռոմի

---

[1] **Հայր Սահակ Կոգյան**, «Հայոց Եկեղեցին», 1961 թ., Բեյրութ:

[2] **Հայր Կարապետ Ամատունի**, «Ոսկան վարդապետ Երևանցին և իր ժամանակը», 1975 թ., Վենետիկ:

[3] **Հայր Կարապետ Ամատունի**, „L'église arménienne et la catholicite". 1978 թ. Վենետիկ:

[4] **Հայր Ներսես Սեթյան**, „Eine Rechtfertigung der armenisch-unierten armenischen Kirche aus der Geschichte" „Die Kirchen Armeniens" հատորի մեջ—Stuttgart—1978.

Սրբազան Պապից սկսյալ, ոգեշնչված են եկեղեցական էկումենիզմի գաղափարականով և առաջնորդվում են Եկեղեցյաց միջև փոխադարձ հանդուրժողության և եղբայրական սիրո ու գործակցության զգացումներով, և, վերջապես, երբ Հայաստանյայց Եկեղեցու, հատկապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սիրո և հարգանքի զգացումները հետզհետե աճում են ու զարգանում Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու և նրա Սրբազան քահանայապետների նկատմամբ, անավասիկ մեր օրերին գտնվում են հայ կաթոլիկ մի քանի հայրեր, որ սիրտ ունեն և ախորժակ, տարիներ, տարիներ աշխատելու՝ նպատակ ունենալով հեղինակազրկել մեր Մայր Եկեղեցին ու վիրավորել ամբողջ հայ հավատացյալ ժողովուրդը:

Հայ ազգի համար այսպիսի բախտորոշ ժամանակաշրջանում, հայ հոգևորականը ինչքա՜ն դատարկված պիտի լինի ավետարանական սիրո զգացումից, ինչքա՜ն դատարկված պիտի լինի հայ ժողովրդի մեր օրերի իրավ ապրումներից ու սպասումներից, ինչքա՜ն հեռու պիտի լինի ճշմարիտ էկումենիկ ոգուց, որ նստի ու տարիներ վատնի, վերարծարծելու համար շատոնց բրածո դարձած «բյուզանդական վեճեր», վեճեր, որոնք ոչինչ չեն ասում մեր օրերի մարդուն, առավել ևս մեր օրերի հայ մարդուն, և ոչինչ չեն կարող ապացուցել, ինչքան էլ իրենց մտքի և գրչի մարզանքները ճարպիկ թվան ու ճշմարտանման:

Վաղուց պատմության զամբյուղն են նետված նման վեճերն ու հավակնությունները, վաղուց մեր ողջամիտ ժողովուրդը դատապարտության սյունին է մեխել Նիկոլ Թորոսովիչյան ազգուրաց այլանդակությունը:

Հիշենք այստեղ Պողոս առաքյալի պատգամը, որ այնքան այժմեական է հնչում մեր պարագային՝

«Հեռու վանիր հիմար խնդիրները և տոհմաբանությունները և հակաճառությունները ու կռիվները օրենքի շուրջ, որովհետև դրանք անօգուտ են և սնոտի: Հեռացիր հերձվածող մարդուց, մեկ կամ երկու անգամ նրան խրատելուց հետո, իմացիր, որ շեղված է այդպիսին և մեղանչում է, ինքն իսկ դատապարտելով իրեն» (Տիտոս Գ. 9—11):

Արդ, Մեր սպասումն է ու հրավերը ուղղված մեր կաթոլիկ եղբայրներին և հատկապես Մխիթարյան ժրաջան հայրերին, հեռու մնալ Թորոսովիչյան չար ճանապարհից և առաջնորդվել Ալիշանյան ազգաշեն ու հայրենաբաղձ ոգով:

Մեր սպասումն է ու հրավերը նաև, որ մեր կաթոլիկ եղբայրները չփորձեն պղտորել հարազատ էկումենիկ ոգով սկիզբ առած այն աստվածահաճո հարաբերությունները, որոնք հետզհետե զարգանում են Հռոմի մեծ Եկեղեցու և Հայաստանյայց Եկեղեցու միջև:

Ժամանակն է, որ Եկեղեցիները վերջնապես հրաժարվեն հին վեճերից ու հավակնություններից և աշխատեն ոչ թե իրար տկարացնել, այլ հետամուտ լինեն իրար զորացնելու, իրար օգնելու անպայմանավոր սիրովը Քրիստոսի, այսպիսով զորացնելու համար քրիստոնեական համաշխարհային եղբայրությունը:

Հայաստանյայց Եկեղեցին եղել և մինչև մեր օրերը մնացել է խորհրդանիշը հայ ժողովրդի ոգեկանության, հայ ժողովրդի հոգու անկախության, հայ ժողովրդի արժանապատվության ու հպարտության:

«Եկեղեցին հայկական բարձր բերդն է հավատքին իմ պապերուս»:

———•———

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏ. ՀԱՍՐԱԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» Ա ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻՐ ՀԱՍՐԱԹ ՄԻՔԱՅԵԼԵԱՆԻՆ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պաղտատ

Անհուն է մխիթարութիւնը եւ ուրախութիւնը Մեր, երբ կը տեսնենք թէ ափիւռքի տարածքի վրայ մեր Սուրբ Եկեղեցւոյ զաւակներու ընտրեալները նեցուկ կը հանդիսանան մեր կրօնական եւ ազգային հաստատութեանց շէնութեան եւ ծաղկումի գործին, սատարելով միաժամանակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառութեան:

Հետեւաբար ինչպէ՞ս չհրճուի Մեր հոգին, երբ Ձեր սրտեռանդ ու ազգաշէն գործունէութեամբ Դուք, իբրեւ մեր ժողովուրդի ընտրեալներէն մին, տարիներ շարունակ յոյժ օգտակար աշխատանք ծաւալած էք Իրաքի հայ գաղութի ծոցին մէջ:

Անցեալ տարի Պաղտատ կատարած Մեր հովուապետական այցելութեան ժամանակ, անձամբ ականատես եղանք Ձեր մատուցած եկեղեցանուէր ու հանրօգուտ մեծ ծառայութեանց՝ իբրեւ իմաստուն, հեռատես եւ եռանդուն ատենապետ ազգային-եկեղեցական Կեդրոնական Վարչութեան:

Այսու Մեր հայրապետական կոնդակով կ՚օրհնենք Ձեր վաստակը եւ ի նշան ջերմ գնահատանքի, Ձեզ կը պարգեւատրենք «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» Ա կարգի շքանշանով, մաղթելով որ զայն կրէք Ձեր կուրծքին վրայ

բազում տարիներ՝ քաջառողջութեամբ, խաղաղ ու արեւոտ օրերով եւ ընտանեկան երջանկութեամբ:

Օրհնութիւն Ձեր կեանքին, Ձեր վաստակին եւ նորանոր ներշնչումներ ու անսպառ կորով, շարունակելու համար եկեղեցաշէն ու հասարակական Ձեր գործունէութիւնը եւս երկար տարիներ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 5 մարտի
1979 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԸ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 957

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԱԲՐԱՀԱՄ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» Ա ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱԲՐԱՀԱՄ ՇԱՀԻՆԵԱՆԻՆ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պաղտատ

Ամենածոյ ողորմութեամբ, Մենք խորապէս մխիթարուած ենք, որ սփիւռքի տարածքի վրայ, մեր հաւատացեալ ժողովուրդի ծոցին մէջ կան ու կը գործեն պատուական անձինք, որոնք նուիրումով կ'աշխատին շէն ու պայծառ պահել մեր աղօթքի Տուներն ու ազգային-մշակութային հաստատութիւնները:

Մեր Եկեղեցւոյ այդ պատուական զաւակներու հոյլին կը պատկանիք նաեւ Դուք, իրաքահայ մեր սիրեցեալ գաղութին Ձեր մատուցած ծառայութիւններով:

Անցեալ տարի Մեր կատարած հովուապետական այցելութեան ժամանակ, Մենք անձամբ տեսանք Պաղտատի հայոց ազգաւոյտական գեղաշէն ծերանոցը, որ կեանքի կոչուած է հանգուցեալ բարերարուհի տիկին Ռեճինէ Կարապետ Իսքենէրի կտակով: Քաջ յայտնի է նաեւ որ երջանկայիշատակ բարերարուհիի կտակի կենսագործումը եւ օգտաշատ այդ հաստատութեան կառուցումը, հնարաւոր դարձած են Ձեր տքնաջան ու ազնիւ աշխատանքի շնորհիւ:

Որով, գնահատելով Ձեր ազգօգուտ եւ բարեսէր գործունեութիւնը, այսու հայրապետական Մեր կոնդակով Ձեզի կը յղենք Մեր օրհնութիւնը եւ կը պարգեւատրենք Ձեզ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով, աղօթելով,

որ Տէրը Ձեզի շնորհէ քաջառողջ, երկար ու խաղաղ տարիներ, լի ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 5 մարտի
1979 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԸ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 958

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ «ԴԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ «ԴԱՐՈՒՀԻ ՅԱԿՈԲԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ, ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՇՏՕՆԷՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԿԱՌՈՅՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԷՆ

Պէյրութ

Հոգեկան անհուն մխիթարութիւն է Մեզի համար որ Աստուծոյ ողորմութեամբ հայ սփիւռքի տարածքի վրայ հայոց աղօթքի Տուներուն կողքին ժիր եռանդով կը գործեն կրթական հաստատութիւններ, հայ նոր սերունդներուն ջամբելու համար քաղցրութիւնը մեր մայրենի լեզուին եւ լոյսերը հայ ոգեկանութեան:

Աղջկանց երկրորդական ձեր վարժարանը, Լիբանանի գեղածիծաղ մայր քաղաքի՝ Պէյրութի սրտին վրայ բարձրացած, ահա քառասուն տարիներէ ի վեր, այդ նուիրական առաքելութեան է նուիրուած, պատուոյ տեղ մը գրաւելով Լիբանանի եւ ամբողջ հայ սփիւռքի կրթական հաստատութեանց մէջ: Հազար, հազար հայ աղջիկներ չորս տասնեակ տարիներ շարունակ ձեր վարժարանէն ստացած են հոգեւոր սնունդ, գիտութիւն, բարոյական դաստիարակութիւն եւ ազգային նկարագիր:

Մենք ջերմապէս կը գնահատենք հայ ժողովուրդին մատուցած ձեր վարժարանի անփոխարինելի ծառայութիւնները եւ քառասնամեայ բեղուն ձեր գործունէութեան սեմին, սուրբգրական Հայոց աշխարհէն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն ձեզի բոլորիդ կը յղենք մեր Հիացումը, Մեր սէրը եւ Մեր օրհնութիւնը, մաղթելով ձեզի բոլորիդ գործելու աննահանջ եռանդ, հոգեշէն կորով ու լաւատեսութեան ոգի, ազնիւ հպարտութեամբ շարունակելու

համար ձեր դաստիարակչական առաքելութիւնը լոյսի ծարաւ հաւատաւոր մեր ժողովուրդի ծոցին մէջ:

Թող միշտ անսասան, միշտ լուսառատ եւ միշտ շէն մնայ Դարուին Յակոբեանի անուան ձեր վարժարանը:

«Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր: Զի դուք էք փառք մեր եւ խնդութիւն» (Ա Թես. Բ 19—20): Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 22 ապրիլի
1980 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԹ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 1014

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒՀԻ ՕՐԻՈՐԴ ՀՌԻՓՍԻՄԷ ԳԱՐԱԳԱՇՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ—Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՋՆՈՒԱՓԱՅԼ ՕՐԻՈՐԴ ՀՌԻՓՍԻՄԷ ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻՆ, ՀԱՐԱՋԱՏ ԴՍՏԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Փարիզ

Օգնութեամբը Բարին Աստուծոյ ափիւռքի տարածքին վրայ հայ ժողովուրդի գոյատեւումը մեծ չափով պայմանաւորուած է մեր մայրենի լեզուի եւ մեր ազգային մշակոյթի արժէքներու պահպանմամբ: Մեր օրերու այդ փրկագործ առաքելութեան նուիրուած են մեր ազգի ամենաընտրեալ զաւակները, որոնք հերոսական աշխատանք կը կատարեն բազում դժուարութեանց տոկալով:

Հայ նոր սերունդներու, բարոյական ու ազգային դաստիարակութեան վսեմ գործին նուիրուած էք նաեւ Դուք, բազում տարիներէ ի վեր, իբրեւ վաստակաշատ դաստիարակ եւ կրթական մշակ, իբրեւ մանկավարժ եւ մշակութային գործիչ, իբրեւ տնօրէնուհի Դպրոցասէր Տիկնանց վարժարանի, միշտ յարգուած ու սիրուած Ձեր աշակերտուհիներէն եւ գործակիցներէն: Ձեր ամբողջ կեանքն եղած է նուիրում, ծառայութիւն եւ պայքար ի խնդիր մեր ժողովուրդի նոր սերունդներու առողջ ու հայեցի դաստիարակութեան:

Վարձքերնիդ կատար եւ ջերմ գնահատանք ու օրհնութիւն Ձեր անբասիր կեանքին եւ Ձեր պայծառ վաստակին:

Սիրով ընդառաջելով Եւրոպայի հայոց կաթողիկոսական պատուիրակ եւ Փարիզի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեան եւ Դպրոցասէր Տիկնանց վարժարանի հիմնադրման հարիւրամեակի առթիւ այսու հայրապետական կոնդակով կը շնորհենք Ձեզի «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանը, մաղթելով որ զայն կրէք Ձեր կուրծքի վրայ բազում երկար տարիներ ազնիւ պարծանքով, քաջառողջութեամբ եւ երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 6 հոկտեմբերի
1979 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԸ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 981

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԱՐ ԿԱՐԱՊԵՏ ՔԻՇՄԻՇՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ—Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԿԱՐԱՊԵՏ ՔԻՇՄԻՇԵԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈ՞ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պաղտատ

Ցոյժ մխիթարական է Մեզի համար հաստատել, որ Դուք որպէս հիմնադիրը, խմբավարը եւ մղիչ ոյժը տեղւոյդ Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան «Կոմիտաս» երգչախումբին, նուիրումով եւ հոգեւոր եռանդով քսանհինգ տարիներէ ի վեր կը ծառայէք մեր Մայր Եկեղեցիին ժողովուրդին եւ հայ երաժշտական արուեստին:

Ի գնահատումն Ձեր երկարամեայ արդիւնաւէտ գործունէութեան եւ ընդառաջելով Իրաքի հայոց առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Աւագ վարդապետ Աստուրեանի միջնորդութեան, այսու Մեր կոնդակաւ Ձեզի կը շնորհենք «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանը, մաղթելով, որ վերանորոգեալ ուժերով առաւել եւս ծաղկեցնէք թեմիդ եկեղեցին եւ նորանոր յաջողութիւններով պսակէք մեծն Կոմիտասի անունը կրող ձեր երգչախումբը:

Սրտանց կ'աղօթենք նաեւ Ձեր եւ Ձեր բոլոր հարազատներու քաջառողջութեան եւ արեւշատութեան համար:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 27 սեպտեմբերի
1979 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԸ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 977

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ ՏԻԿՆԱՑ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ՄԱՐՄՆԻ ԱՏԵՆԱՊԵՏՈՒՀԻ ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ՁՈՊԱՆՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱԶՆՈՒԱՓԱՅԼ ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ՁՈՊԱՆԵԱՆԻՆ, ՀԱՐԱԶԱՏ ԴՍՏԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պաղտատ

Մեզի համար մխիթարական է, որ մեր պանդուխտ ժողովուրդի ծոցին մէջ փոքր չէ թիւը հարազատ զաւակներուն, որոնք իրենց եռանդուն գործունէութեամբ նեցուկ կը հանդիսանան մեր Սուրբ Եկեղեցւոյն եւ ժողովուրդին, աննահանջ հաւատարմութեամբ ամենայն հայոց Սուրբ Էջմիածնի հանդէպ:

Այդ հոյլին պատկանող Մեր հարազատ զաւակներէն կը հանդիսանաք նաեւ Դուք, Ձեր երկարամեայ անբասիր գործունէութեամբ, որպէս քառասուն տարուայ անդամ տեղւոյդ Տիկնանց Աղքատախնամ Մարմնի եւ ժրաջան ատենապետը վերջին քսան տարիներու:

Սիրով ընդառաջելով Իրաքի հայոց առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Աւագ վարդապետ Ասատուրեանի միջնորդութեան, սոյն Մեր կոնդակով Սուրբ Էջմիածնէն Ձեզի կը շնորհենք «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանը, մաղթելով երկար տարիներու քաջառողջ կեանք ու միշտ անսպառ բարի եռանդ, շարունակելու Ձեր աստուածահաճոյ ծառայութիւնը մեր սիրելի ժողովուրդին:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 2 հոկտեմբերի
1979 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԸ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 975

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԳԵՀՈՆԱՀԱՐ ՏԻԿԻՆ ԷՈԺԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՋՆՈՒԱՓԱՅԼ ՏԻԿԻՆ ԷՈԺԵՆ ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ԴՍՏԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պաղտատ

Անհուն գոհունակութեամբ տեղեկացանք Իրաքի հայոց առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Աւագ վարդապետ Ասատուրեանի 18 սեպտեմբեր 1979 թուակիր միջնորդագրէն, որ Դուք օրինակելի անձնուիրութեամբ եւ բարեխղճութեամբ քսանհինգ տարիներէ ի վեր կը ծառայէք տեղւոյդ Մայր եկեղեցւոյն որպէս ժրաջան երգեհոնահար եւ գործունեայ անդամուհի եկեղեցւոյդ Բարեզարդման Մարմնին:

Սիրով ընդառաջելով Հայր Սուրբի միջնորդութեան, սոյն Մեր կոնդակով Սուրբ Էջմիածնէն Ձեզի կը շնորհենք «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանը, մաղթելով երկար տարիներու քաջառողջ կեանք ու միշտ անսպառ բարի եռանդ, շարունակելու Ձեր եկեղեցանուէր ծառայութիւնը մեր Մայր Եկեղեցիին:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 3 հոկտեմբերի
1979 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԸ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 976



ԴԱՆԻԱՑՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ, ՈՐԸ ՆՎԻՐՎԱԾ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԻՆ։ ԱՄՍԱԳՐԻ ՇԱՊԻԿՆ Է, ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ՆԿԱՐՈՎ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ ԴԱՆԻԱՅԻ ԿԱՆԱՆՑ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԿԱՎԱԳՈՒՀԻ ՔՈՒՅՐ ՔՐԻՍՏԵՆ ՎԻՆԴԻՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՀԱՄԵՍՏԱՓԱՅԼ ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻ ՔՈՅՐ ՔՐԻՍՏԵՆ ՎԻՆԴ, ՆԱԽԱԳԱՀ ԿԱՆԱՆՑ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կոպենհագեն

Մեծագոյն գոհունակութեամբ ստացանք եւ կարդացինք 14 Նոյեմբեր 1979 թուակիր Ձեր նամակը, Հայաստան եւ Սուրբ Էջմիածին կատարած Ձեր կարճատեւ այցելութեան մասին:

Այս առթիւ Մենք կրկին վերյիշեցինք հայ ժողովուրդի կրած անհաւոր տառապանքները անցեալին մէջ, ինչպէս նաեւ դանիական ազնիւ ժողովուրդի տածած մարդասիրական հոգատարութիւնը մեր բազմաչարչար ժողովուրդի նկատմամբ:

Որպէս Հայոց Ընդհանրական Հայրապետ, Բիբլիական Արարատի փեշերէն, երախտագիտութեամբ կ'օրհնենք բարի անունն ու յիշատակը Ձեր մեծ մօր, Ձեր մայրիկի, ինչպէս նաև օրիորդ Մարիա Ժակոբսենի եւ իրենց դանիացի գործակիցներու, որոնք տասնամեակներ շարունակ, որպէս նուիրեալ անձինք Քրիստոսի, զոհաբերութեան ոգիով և անդուլ աշխատանքով իրենց կարելին ի գործ դրին սրբելու բազմահազար հայ որբերու եւ որբուհիներու արցունքը եւ պահպանելու անոնց ֆիզիկական ու բարոյական գոյությունը:

Միպէյլի «Թռչնոց բոյնը» դանիացի ազնիւ ժողովուրդի արտագին նուէրն է մեր ժողովուրդին:

Ձեր բազում տարիներու ծառայութիւնները. Մենք բարձր կը գնահատենք եւ այսու Մեր կոնդակաւ կը յղենք Ձեզի հայրապետական Մեր օրհնութիւնը:

Մեր ջերմագին բարեմաղթութիւնները կատարեալ առողջութեան, ու Ձեր աստուածահաճոյ առաքինի գործոց յաջողութեան:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 3 յունուարի
1980 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԹ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 997

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈՒՆԱՎՄՆԱԿԱՆ ԳՐՈՒՄԵՐՈՒՆ
ԱՌԱՆՑՔԻ ՍԵՌ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Զերդ Սրբություն,

Դժվարանում եմ հիացմունքիս զգացումը արտահայտող բառեր գտնել, երբ մի քանի շաբաթ առաջ ստացա Զերդ Սրբության հայրապետական կոնդակը: Դա շատ մեծ պատիվ էր, և կարող եմ միայն ասել, որ Աստուծո ներկայությանը, Զերդ Սրբության օրհնության խոսքերը ընդունված են խորը երախտագիտությամբ:

Առաջիկա ամսին, ապրիլի սկզբներին, Զեր պատգամը (նկարով հանդերձ) պիտի հրատարակվի մեր «Bring Lys» («Պայծառ լույս») թերթում, որը ուղարկվում է K. M. A-ի 2200 ընթերցողներին՝ իմ Հայաստան կատարած այցելության նկարագրության հետ մեկտեղ:

Զերդ Սրբության մեծ Ազնվությունը, որը ուղարկել է այս գեղագիր պատգամը, շատերին պիտի հայտնի լինի: Մենք Զեզ կուղարկենք թերթի մի օրինակ:

Զեր պատգամը այժմ տեղադրել եմ սենյակիս պատին և ամեն օր դիտում եմ մեծ հաճույքով և գոհունակությամբ, միևնույն ժամանակ աղոթում եմ առ Աստված, որ Տերը օրեցօր Զեզ պարգևի ուժ և կարողություն ու Աստուծո խոսքը կենդանի պահելու իմաստություն՝ ատելությամբ և տառապանքով լի այս աշխարհում:

Լավագույն մաղթանքներով և սրտաբուխ աղոթքներով՝

Կոպենհագեն ՔՈՒՅՐ ՔՐԻՍՏԵՆ ՎԻՆԴ

Բոլոր Եկեղեցիներ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ)
Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ Եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ
(Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),
Ղպտի ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա)
Անտիոքի և Համայն Արևելքի հունաց ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԷ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),
Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԺՈՒՍՏԻՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղար օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
Անտիոքի և Համայն Արևելքի հույն կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի ասորի կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵԿ Բ-ԻՆ (Բեյրութ),
Քենթրբերիի արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆԻՆ (Լոնդոն),
Աթենքի և Համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և Համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և Համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և Համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵԻՆ (Պրագա),
Հայ կաթողիկե Եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն ՀՄԱՅԱԿ-ՊԵՏՐՈՍ ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Բեյրութ),
Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),
Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼՈՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ՖՐԱՆՑ ԿՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
Փարիզի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),
Լիոնի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),
Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Մարսելի արքեպիսկոպոս, Գերաշնորհ ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական Եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական Եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԱԼՖՐԵԴ ՏՈՈՄԻՆԳԻՆ (Տալլին),
Միջին Արևելքի հայ ավետարանական Եկեղեցիների միության նախագահ, Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ՄԱՈՒՐԻԼԻՈ ՍԱԿԿԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ
ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱՃՅԱՆԻՆ (Մարսել),
Վերապատվելի ՎԱՀԱՆ Հ. ԹՈՒԹԻԿՅԱՆԻՆ (Նյու Յորք),

Այսօր, վերստին կանգնած Հիսուսի դատարկ գերեզմանի առջև, սուրբ առաքյալներու հավատքով ջերմացած սրտերով անգամ մը ևս կխոստովանինք, թե ճշմարտապես «յարեաւ Քրիստոս ի մեռելոց», մահվամբ մահը հաղթեց և իր հրաշափառ Հարությամբ կյանք պարգևեց այս աշխարհի մարդոց, մեզի բոլորիս:

Հիսուսի Հարությունը գերագույն գրավականն է կյանքի ուժերու հաղթանակին՝ ընդդեմ մահվան, բարվո և արդարության հաղթանակին՝ ընդդեմ մեղքին ու չարին, սիրո և խաղաղության հաղթանակին՝ ընդդեմ ատելավառ ու խռովարար արարքներու:

Սուրբ Հատկի այս այգաբացին, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության ավետիսով, ուրախ ենք Ձերդ Սրբության հղելու Մեր եղբայրական ողջույնը՝ մաղթելով ջերմագին, որ Հարուցյալ Փրկչի շնորհները առատապես իջնեն Ձեր անձին և ձեր պատմական մեծ Եկեղեցիին վրա, ի լիակատար պսակումն և ի փառավորումն Ձեր սուրբ առաքելության մեր օրերու աշխարհի մեջ:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր Եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Սիրեցյալ Եղբայր Մեր,

Այսօր, վերստին կանգնած Հիսուսի դատարկ գերեզմանի առջև, սուրբ առաքյալներու հավատքով ջերմացած սրտերով անգամ մը ևս կխոստովանինք թե ճշմարտապես «յարեաւ Քրիստոս ի մեռելոց», մահվամբ մահը հաղթեց և իր հարությամբ կյանք պարգևեց աշխարհի մարդոց, մեզի բոլորիս։

Հիսուսի հարությունը գերագույն գրավականն է կյանքի ուժերու հաղթանակին՝ ընդդեմ մահվան, բարվո ու արդարության հաղթանակին՝ ընդդեմ մեղքին ու չարին, սիրո և խաղաղության հաղթանակին՝ ընդդեմ ատելավառ ու խռովարար արարքներու։

Սուրբ Զատկի այս առավոտուն, Հիսուսի հարության ավետիսով թող ցնծա մեր Մայր Եկեղեցին, և մեր հավատացյալ զավակներու կյանքն ու ձեռաց գործերը թող լուսավորվին հարության ուրախության ճառագայթումով։

Հարուցյալ Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի Իշման Սուրբ Սեղանեն և սուրբ գրական Արարատյան Հայոց աշխարհեն, Ջերդ Ամենապատվության և

Սուրբ Աթոռիդ զինվորյալ միաբանության, ձեր բոլոր եկեղեցիներուն ու համայն ժողովուրդին՝ մեծ ավետիս՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Շնորհք հրաշալի հարության Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ այժմ և հավիտյան: Ամեն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի սրտագին շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորանքների համար:





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԺՆԵՎՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՎԱԹՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ս. Էջմիածին

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը իր աղոթքներով միանում է Հայ Եկեղեցու հետ՝ հայ ժողովրդի 1915 թ. ապրիլի 24-ի ողբերգության հիշատակության առիթով:

ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐ

Ժնև,
24 ապրիլ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ

Ժնև

Խորապես զգացված ենք Ձեր աղոթքների համար ի խաղաղություն Արևմտյան Հայաստանում 1915 թվականի ցեղասպանության զոհ գնացած շուրջ երկու միլիոն հայ քրիստոնյաների համար:

Այսօր Մեր աղոթքն է, որ նման ողբերգություններ երբեք չկրկնվեն աշխարհի վրա որևէ տեղ, և ժողովուրդները ապրեն խաղաղության մեջ, իբրև որդիները միևնույն Աստուծո:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին,
Ապրիլի 24



ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐՏԱՌՈՒՉ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 1914 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԴԻՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՍԱԾ ԹՇՎԱՌ ԵՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խոր հուզումով հրատարակում ենք երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Ե կաթողիկոսի 1914 դեկտեմբեր 28 թվակիր սրտառուչ կոնդակը «Օգնութեան Կարգադիր Ցանձնաժողով» նշանակելու մասին, Արևմտյան Հայաստանից Սուրբ Էջմիածին հասած գաղթական հայության բեկորներին անմիջական եղբայրական օգնություն հասցնելու նպատակով, գաղթականներ, որոնք «փախեան ի սահմանս մեր և այսօր հազարաւոր թշուառ կանայք և անմեղ մանկունք և ծերք, ժողովեալք ի Ս. Էջմիածին, ընդ հովանեաւ Մայր Աթոռոյս, խնդրեն ի մէնք զօգնութիւն»:

1914 թվականին, իբրև նախանշան կամ սկզբնավորություն, Արևմտյան Հայաստանի արևելյան շրջանում արդեն սկսել էին արհավիրքները, իսկ 1915 թվականին, ինչպես հայտնի է, տեղահանությունը զանգվածային բնույթ էր ստացել և սկսվել հայ աղետյալների «սարսափահար և խելակորույս» փախուստը դեպի Արևելյան Հայաստան:

1914 թվականի ձմռան արհավիրքները սկզբնավորությունն էր գալիք՝ 1915 թվականի Մեծ եղեռնի:

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Գերապատիւ Տ. Եփրեմ, Տ. Բագրատ, Տ. Մատթէոս եպիսկոպոսաց եւ բարձրապատիւ Տ. Գարեգին, Տ. Բարգէն եւ Տ. Վրթանէս վարդապետաց, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջո՜յն եւ օրհնութի՜ւն Հայրապետական:

Դարձեալ լսեմք ի Հայաստան աշխարհէ զողբս եւ զաղաղակս անօգնական եւ անպաշտպան սիրելի զաւակացս: Գիտէք արդէն, զի ի վերջին աւուրս յանկարծակի թշուառութիւնք եւ սոսկալի արհաւիրք եկին հասին ի

վերայ զաւակաց, յորոց բազումք թողեալ զհայրենի տունս եւ զամենայն ստացուածս իւրեանց ի Տաճկա-Հայաստանի եւ յԱտրպատականի, սարսափահար եւ խելակորոյս լեալ, փախեան ի սահմանս մեր եւ այսօր հազարաւոր թշուառ կանայք եւ անմեղ մանկունք եւ ծերք, ժողովեալք աստ ի Ս. Էջմիածին, ընդ հովանեաւ Մայր Աթոռոյս, խնդրեն ի Մէնջ զօգնութիւն:

Ցանկացեալ Մեր ընդ փոյթ հասանել յօգնութիւն արկածելոց, դիմեցաք առ պարտաճանաչ հոգեւոր որդիս Մեր, յորոց ոմանք շարժեալ ի մարդասիրական վեհ զգացմանց, ազնուաբար արկին զլումայս իւրեանց յազգային գանձանակ վասն փրկելոյ զկեանս արկածելոց եւ տառապելոց:

Արդ՝ անհրաժեշտ համարելով զկազմակերպումն քրիստոնէական օգնութեան վասն հազարաւոր զաւակաց, այսու հայրապետական կոնդակաւս նշանակեմք զՁեզ անդամս Կարգադիր Ցանձնաժողովոյ Եղբայրական Օգնութեան ընդ անմիջական հսկողութեամբ եւ տնօրէնութեամբ Մերով եւ պատուէր տամք Ձեզ կատարել զյետագայս.

Ա.) Փութով ժողովել ի մի զամենայն տեղեկութիւնս զհայ գաղթականաց, որք ի պատճառս ռուս-տաճկական պատերազմի, թողեալ են զտունս եւ զստացուածս իւրեանց եւ գտանին ի թշուառ կացութեան, ցրուեալք յայլ եւ յայլ տեղիս:

Բ) Քննել ի ձեռն մասնաժողովոց, ներկայացչաց եւ վստահելի անձանց զվիճակ նոցա եւ զհետեւանացն յայտ առնել Մեզ ի տնօրէնութիւն.

Գ.) Մտանել ի բանակցութիւն ընդ Ցանձնաժողովս Եղբայրական Օգնութեան. հաստատեալս կոնդակօք Մերովք ի զանազան քաղաքս, տալով նոցա զկարեւոր տեղեկութիւնս վասն գաղթականաց եւ խնդրելով ի նոցանէ զտեղեկագիրս գործունէութեան իւրեանց, մատուցանել Մեզ ի գիտութիւն.

Դ.) Միաւորել զգործունէութիւնս ամենայն Ցանձնաժողովոց Եղբայրական Օգնութեան եւ, ի դէպս անհրաժեշտութեան, նախապէս ընկալեալ ի Մէնջ զկարեւոր հրահանգս, հրաւիրել աստ ի Ս. Էջմիածին զներկայացուցիչս նոցա ի խորհրդակցութիւն՝ վասն որոշելոյ զընդհանուր սկզբունս գործունէութեան յօգուտ գաղթականաց.

Ե) Խորհրդակցել պարբերաբար ընդ ներկայացուցիչս մերձակայ քաղաքաց եւ սահմանագլուխ աւանից վասն կանոնաւորապէս պահպանելոյ եւ բնակեցուցանելոյ զգաղթականս ի շրջակայ գիւղօրայս, յայսմ ցրտագին եղանակի.

Զ) Խնամել ըստ ամենայնի եւ տալ նոցա զբժշկական օգնութիւնս, սփոփել եւ մխիթարել զնոսա հոգեպէս.

Է) Ստանալ ի Սինոդէ Ս. Էջմիածնի զժապաւինեալ մատեան եւ պահել զամենայն հաշիւս կանոնաւորութեամբ եւ կանխագոյն թոյլտուութեամբ Մերով ստանալ ի գանձապահէ Մայր Աթոռոյս զանհրաժեշտ դրամս ի նուիրատուութեանց յօգուտ գաղթականաց:

Լիայոյս եմք, զի Դուք, որդեակք հոգեւորք, առաջի աչաց ունելով զողբալի եւ զյուսահատ վիճակ եւ զսոսկալի տառապանս գաղթականաց մերոց, գործեսջիք ամենայն եռանդեամբ եւ անձնուիրութեամբ ի թեթեւացումն ազգային աղէտից:

Լիայոյս եմք նոյնպէս, զի գերապատիւ առաջնորդք, Ցանձնաժողովք Եղբայրական Օգնութեան, ազգային գործիչք մեր, բարեգործք եւ կարողաւորք յամենայն կողմանց փութով օժանդակեսցեն նուիրատուութեամբք իւրեանց վասն դժբաղդ գաղթականաց մերոց:

Աղօթեմք առ Աստուած վասն փրկութեան ազգիս հայոց յամենայն վտանգից եւ ի փորձութեանց։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ օրհնեալ ի մէնջ. Ամէն։

Ի վերայ իսկականին ստորագր.

ԳԷՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 28 դեկտեմբերի 1914 ամի,
ըստ տոմարիս Ռ.Յ.Կ.Դ.
ի հայրապետութեան Մերում Գ ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Թ. 1990

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ—ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻԼԻԱ Բ-ԻՆ

Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Իլիա Բ-ի և Վրաստանի հայոց թեմական առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոսի հրավերով Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը հովվապետական այցելությամբ ս/թ. ապրիլի 11—15 օրերին գտնվում էր Վրաստանում:

Այս առիթով Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղեկցում էին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը, Մայր Աթոռի միաբան Տ. Անանիա վրդ. Արաբաջյանը և Վաչագան սրկ. Ավետիքյանը:

11 ԱՊՐԻԼԻ, ՈՒՐԲԱԹ, ՄԵԿՆՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կեսօրվա ժամը 14-ին Երևանի «Հարավային» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և Նրա շքախմբի անդամներին բարի ճանապարհ է մաղթում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանի:

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու էին եկել նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Իր թռիչքից մոտավորապես 30 րոպե անց Երևանից ժամանող ինքնաթիռը վայրէջք է կատարում եղբայրական Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում: Տեղի օդանավակայանում Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորում են Համայն Վրաստանի կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ն, Քութայիսիի և Կենաթի միտրոպոլիտ Տ. Շիոն, Սուխումիի և Աբխազիայի արքեպիսկոպոս Տ. Նիկոլայը, Չիոնդիի արքեպիսկոպոս Տ. Իոանը, Բաթումի-Շեմոկմեդի եպիս-

կոպոս Տ. Դավիթը, Ացարեկ-Ցելիի եպիսկոպոս Տ. Ամբրոսիոսը, Տ. Սոկրատ վարդապետը, Տ. Գուրամ, Տ. Միքայել, Տ. Ելգուջա ավագ քահանաները:

Վրաստանի հայոց թեմի անունից Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք է ասում թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը:

Վեհափառ Հայրապետին Թբիլիսիում դիմավորողների թվում է նաև Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր տիար Գիվի Մայսուրաձեն իր տեղակալի՝ տիար Իլիա Բուրուայի հետ:

Ողջագուրումից և բարիգալստյան խոսքերից հետո մեքենաների շքերթը ուղղվում է դեպի Թբիլիսիի «Իվերիա» հյուրանոց, ուր իջևանելու էր Վեհափառ Հայրապետը:

ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅՈՑ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Նորին Սրբություն Տ. Իլիա Բ-ի, վրաց բարձրաստիճան հոգևորականների և Իր շքախմբի, «Հրաշափառ»-ով մուտք է գործում Թբիլիսիի հայոց Ս. Էջմիածին եկեղեցի, ուր և երեկոյան-խաղաղական ժամերգության ավարտից հետո Նորին Սրբությունը ասում է հետևյալ Իր օրհնության խոսքը:

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Սիրելի հավատացյալներ,

Այսօր, Աստուծո ողորմությամբ և եղբայրական հրավերովը Նորին Սրբություն Իլիա Կաթողիկոսին, և մեր թեմական առաջնորդի՝ Վրաստանի հայոց, եկել ենք Ս. Էջմիածնից, եկել ենք Հայաստանից, ձեզի բերելու Մեր հայրական ողջույնը և Աստուծո օրհնությունը: Մենք չափազանց երախտապարտ ենք Մեր սիրեցյալ եղբոր Տ. Իլիա Բ կաթողիկոսին, որ ցանկացավ Մեր այցելությունը լինի Ձատկական տոներից անմիջապես հետո: Գիտեք, անցյալ կիրակի մենք բոլորս Ս. Ձատիկը տոնեցինք՝ Քրիստոսի Հարության մեծ հիշատակը և անավասիկ այդ տոնից անմիջապես հետո մենք ձեր մեջ ենք գտնվում, մի անգամ ևս բերելու ամենքիդ՝ ավետիսը Քրիստոսի Սուրբ Հարության:

Սիրելի հավատացյալներ, Քրիստոսի Հարությունը, բոլորիս սրտերին բերում է և՛ ուրախություն, և՛ հոգվո մխիթարություն, և՛ հոգվո խաղաղություն, և՛ մանավանդ մեր հոգիներում, այս տոնական օրերին ամրապնդում է, զորանում է հավատքը բարու, ճշմարիտի, արդարության հաղթանակի, որովհետև Քրիստոս, երկու հազար տարի առաջ, ապրեց, չարչարվեց և խաչափայտի վրա իր կյանքը զոհեց այդ վեհ գաղափարների հաղթանակի և մեղքերից մեր փրկության համար: Մեր Աղոթքների և շարականների մեջ Քրիստոս փառավորվում է իբրև արեգակ արդարության և իբրև իշխան խաղաղության: Ուրեմն, Քրիստոսի հրաշափառ Հարությունը մեր գիտակցության մեջ զորացնում է արդարության և խաղաղության գաղափարները, որոնց համար Քրիստոս աշխարհ եկավ և զոհվեց: Մենք իբրև հավատավոր քրիստոնյաներ, պետք է մնանք հավատարիմ Քրիստոսի այս մեծ պատգամներին: Եվ դուք, որ մեր օրերի մարդիկ եք, գիտեք, որ աշխարհը տակավին հեռու է իսկական և ամբողջական արդարությունից և խաղաղությունից: Դուք գիտեք, որ աշխարհում շատ տեղեր, շատ երկրներում հենց այս օրերին, մարդիկ պարզ և խոնարհ բազմություններ տակավին տառապում են

արդարության պակասից, տառապում են խաղաղության պակասից: Շատ տեղեր խռովություններ, արյունահեղություններ և պատերազմներ կան: Շատ տեղեր ժողովուրդների միջև թշնամություններ: Այսպիսի աշխարհի մեջ մենք իբրև քրիստոնյաներ ուզում ենք պաշտպան հանդիսանալ արդարության և խաղաղության պատգամներին: Այսօր Մենք փառք ենք տալիս Աստուծո, որ մեզ մոտ՝ մեր Սովետական երկրներում կա խաղաղ կյանք և ապահովություն, և կա բարեկամություն և եղբայրություն տարբեր ազգությունների միջև: Չկան թշնամություններ, չկան արյունահեղություններ և ազգամիջյան վեճեր: Բայց աշխարհում ամեն տեղ չէ, որ այդ վիճակն է տիրում: Եվ մեր Եկեղեցիներն էլ ապրում ու գործում են նույն այս ոգով: Եվ մեր այցելությունը այս Ձեր գեղեցիկ երկրին՝ Վրաստանին, ունի նաև նպատակ, հայեր և վրացիներ, որ մենք մի անգամ ևս խոստովանենք մեր եղբայրությունը և պաշտպանը հանդիսանանք աշխարհի խաղաղության սրբազան դատին: Մեր Եկեղեցիները, ինչպես վրացական Եկեղեցին՝ գլխավորությամբ Իլիա կաթողիկոսի, և մեր Մայր Եկեղեցին՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, վաղուց ի վեր մեր պարտքն ենք կատարում մեր օրերի աշխարհում, աղոթելով, որ Աստված օգնական լինի համայն մարդկության, բոլոր ճնշված ժողովուրդներին, բոլոր անարդարացվածներին և հալածվածներին: Բոլոր նրանց, որոնք տառապում են տակավին խռովությունների և պատերազմների հետևանքով: Աղոթում ենք, որ Աստված օգնության հասնի և զորացնի արդարության և խաղաղության ուժերը համայն աշխարհում: Թող բոլոր ազգերը մոռանան իրենց հին թշնամությունները, և ամբողջ աշխարհը լինի մի ծաղկազարդ պարտեզ, խաղաղության և արդարության պարտեզ և մարդիկ ու ազգություններ ապրեն այս արևին տակ եղբայրաբար, իրար սիրեն, իրար օգնեն և մեկը մյուսին նեցուկ լինի և գործակից, իրականացնելու համար երջանկությունը բոլոր մարդկանց և բոլոր ազգությունների: Ահա ինչ է թելադրում Մեզ այսօրը, սիրելի հավատացյալներ, ինչ է թելադրում Մեզ այսօր մեր Փրկչի հրաշալի Հարության հիշատակը:

Թող Աստված մեզ բոլորիս պարգևի յուր օգնությունը, յուր օրհնությունը և իր շնորհները այժմ և հավիտյան: Ամեն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

Շաբաթ օրը, ապրիլի 12-ին, Վրաց Օրթոդոքս Եկեղեցու պատրիարքարանում, Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ն հանդիսավորապես ընդունում է Հայոց Հայրապետի այցելությունը:

Երկու Հայրապետները փոխանակում են ողջույնի խոսքեր, ուր շեշտվում են Հայ և Վրաց Եկեղեցիների ու ժողովուրդների դարավոր բարեկամությունը, պատմական բախտակցությունը և այժմ՝ Սովետական մեծ ընտանիքում այդ երկու երկրների ունեցած նվաճումներն ու հաջողությունները:

Հավարտ ընդունելության Վրացական ՍՍՀ Արտաքսահմանի հետ մշակութային կապի տանը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, ցուցադրվում է Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ի ընտրության և գահակալության հանդիսություններին նվիրված ժապավենը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կեսօրվա ժամը 13-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Նորին Սրբություն Իլիա Բ-ի, այցելություն է տալիս Վրաց. ՍՍՀ Մինիստրների

խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր տիար Գ. Մայսուրաձեին, Կառավարական պալատում:

Հայոց Հայրապետի և հարգելի լիազորի միջև տեղի է ունենում ջերմ, բարեկամական զրույց:

Նույն օրը, ճաշից հետո, Վեհափառ Հայրապետը այցելում է Վրաց. ՍՍՀ վաստակավոր նկարիչ Իրակլի Չիաուրիի արվեստանոց և հայտնում է Իր գնահատանքը արվեստագետի տաղանդի նկատմամբ:

Երեկոյան ժամը 19-ին Վրաց Եկեղեցու Ս. Սիոն Մայր տաճարում տեղի է ունենում երեկոյան հանդիսավոր ժամերգություն, որին հրավիրված է Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով: Խուռներամ հավատացյալների շարքերում ներկա են նաև բազմաթիվ հայ հավատացյալներ:

Տաճարի մուտքի մոտ վրաց հոգևորականները ավանդական աղ ու հացով դիմավորում են Հայոց Հայրապետին և առաջնորդում դեպի Ս. Սեղան: Այստեղ Նորին Սրբություն Իլիա Բ-ն ողջագուրվում է Հայոց Հայրապետի հետ, որից հետո ողջույնի խոսքով Վեհափառ Հայրապետի բարձր անձը ներկայացնում է տաճարում հավաքված հայ և վրաց հարյուրավոր հավատացյալներին:

Խոսելով հայ և վրաց ժողովուրդների և Եկեղեցիների պատմական բարեկամության մասին, Նորին Սրբություն Իլիա Բ-ն առանձնապես շեշտում է այդ բարեկամության այսօրվա ծաղկումը, որի մեջ անկասկած իր լուման ունի Հայոց մեծագույն կաթողիկոսներից մեկը, որը այսօր հայտնի է ամբողջ աշխարհին Իր խաղաղասիրական և հայրենասիրական գործունեությամբ:

Հավարտ իր խոսքի Իլիա Բ-ն հրավիրում է Վեհափառ Հայրապետին տալու Իր պատգամները և օրհնությունները ներկա հավատացյալներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎՐԱՑ ՍՈՒՐԲ ՍԻՈՆ ՏԱՃԱՐՈՒՄ

Աստուծո ողորմությամբ և եղբայրական հրավերովը Նորին Սրբություն Իլիա Պատրիարք-կաթողիկոսին ահա Մենք գտնվում ենք Վրաստանում, Թբիլիսիում, այս Ս. Սիոն տաճարի կամարների ներքև: Մենք գալիս ենք Հայաստանից՝ Ս. Էջմիածնից բերելու համար ձեզ բոլորիդ մեր ողջույնը և Աստուծո օրհնությունը: Մեզ համար բացառիկ հոգեկան ուրախություն է կրկին անգամ գտնվել այս սուրբ տաճարում: Եվ Մեր ուրախությունը ավելի մեծ է, որովհետև գալիս ենք ձեզ նաև բերելու Քրիստոսի Հարության ավետիսը: Մեր երկու Եկեղեցիները՝ վրացական պրավոսլավ Եկեղեցին և մեր հայկական Եկեղեցին անցյալ կիրակի միասին տոնախմբեցին Քրիստոսի Հարությունը: Քրիստոսի Հարության տոնը տարին մի անգամ կատարում ենք մենք, բայց այդ մի օրվա մեջ մեր հոգեկան աշխարհում ճառագայթում է մի լույս, որ տարածվում է ամբողջ տարվա վրա: Քրիստոսի Հարությունը թեև տեղի է ունեցել երկու հազար տարի առաջ, բայց այսօր էլ մեզ համար պահպանել է իր այժմեությունը: Որովհետև Քրիստոսի Հարությունը խորհրդանշում է կյանքի հաղթանակը ընդդեմ մահու, որովհետև Քրիստոսի Հարությունը խորհրդանշում է բարու հաղթանակը ընդդեմ չարի և մեղքի, որովհետև Քրիստոսի Հարությունը մեզ համար խորհրդանշում է հաղթանակը արդարության ընդդեմ անարդարությունների և բռնությունների:

Եվ վերջապես Քրիստոսի Հարությունը մեզ համար խորհրդանշում է սիրո և խաղաղության իդեալը ընդդեմ ատելության և խռովությանց:

Ահա, սիրելի հավատացյալներ, այդ ավետիսով ենք գալիս Մենք Ս. Էջմիածնից:

Մեզ համար միշտ մեծ երջանկություն է Վրաստան գալ և հանդիպել մեր վրացի եղբայրների հետ, ողջագուրվել նրանց հետ: Մեր սիրո և եղբայրության կապերը ավելի զորացնել և միասին աղոթել և միասին աշխատել մեր ընդհանուր նպատակների իրագործման համար: Մեր Եկեղեցիների նպատակները նույնն են: Այն է՝ հոգեպես մխիթարել մեր հավատացյալներին, քրիստոնեական բարոյական դաստիարակություն ջամբել մեր հավատացյալներին և միատեղ աղոթել աշխարհի խաղաղության համար: Քիչ առաջ Մեր սիրեցյալ եղբայրը՝ Իլիա կաթողիկոսը, հիշեց մեր երկու ժողովուրդների անցյալը, մեր հինավուրց բարեկամությունը: Մենք նույնպես կհաստատենք այդ բոլորը: Վրացական և հայկական ժողովուրդների բարեկամության ոգին այսօր էլ կենդանի է: Եվ մենք մեր պարտականությունն ենք համարում իբրև հոգևորականներ սրտեռանդ գործելու, որպեսզի առավել զորանա, առավել ճառագայթի մեր ժողովուրդների պատմական բարեկամությունը:

Մեր երկու Եկեղեցիները այս օրերին աղոթում և գործում են նաև խաղաղության գաղափարի հաղթանակի համար աշխարհում:

Եվ վերջապես կամենում ենք Մեր ուրախությունը հայտնել, որ նման հանդիպումների առիթով պատեհությունն ենք ունենում լսելու Ձեր գեղեցիկ վրացական լեզուն: Մենք վրացական լեզուն արտաքնապես չենք հասկանում, սակայն հոգով հասկանում ենք: Մեզ թվում է, թե նույն լեզուն ենք խոսում: Եվ լավ է, որ ազատ և զորավոր հնչեն միշտ, քաղցր երաժշտության նման մեր ազգային լեզուները:

Կան մարդիկ, որոնք կարծում են, թե լեզուները պարզ հաղորդակցության միջոցներ են միայն, թե ինչ լեզու էլ խոսենք, մենք կարող ենք իրար հասկանալ: Բնականաբար թե՛ վրացիք և թե՛ հայեր ուրիշ շատ լեզուներ իմանան, քաջ իմանան մանավանդ ռուսաց լեզուն, որպեսզի հաղորդակցության մեջ լինեն ուրիշ ժողովուրդների մշակույթին և գրականության հետ: Այդ շատ լավ է: Սակայն ամեն ժողովուրդ իր մայրենի լեզուն ունի, որ սրբություն է, հազարավոր տարիների ընթացքում աճած ու ծաղկած, հանախ տառապանքներով: Մեր ազգային լեզուների մեջ դրոշմված է հոգու պատկերը մեր ժողովուրդների: Հիշում ենք ֆրանսիացի մի գրողի խոսքը, որ ասել է. «Ֆրանսերեն լեզուն դա ինքը Ֆրանսիան է»: Մենք էլ կարող ենք ասել միևնույն ճշմարտությունը: Վրացերեն լեզուն դա ինքը Վրաստանն է և վրացական ժողովուրդը: Ինչպես՝ հայ լեզուն դա հայ ժողովուրդն է: Եվ մենք հույժ երջանիկ ենք, որ սովետական մեր մեծ ու բազմազգ հայրենիքում մենք պահպանում և ծաղկեցնում ենք մեր ազգային լեզուները՝ այդ հոչակված լինելով մեր հանրապետությունների սահմանադրություններում:

Թող Աստված խաղաղության մեջ պահպանե և ծաղկուն պահե եղբայրական Վրաստանը: Մենք ցանկանում ենք մանավանդ վերածաղկումը վրացական Եկեղեցուն, որի գլուխն է գտնվում այսօր երիտասարդ, կորովի, ուսյալ և հայրենասեր մի կաթողիկոս՝ Իլիա Բ Հայրապետը:

Ցանկանում ենք Ձեզ, սիրեցյալ Եղբայր, աստվածային առատ շնորհներ և մշտանորոգ ներշնչանքներ, որպեսզի Դուք Ձեր բարի սրտով և բարի ձեռքերով հետզհետե բարձրացնեք Ձեր պատմական Սուրբ Եկեղեցին:

Թող Աստված օրհնե Ձեր Սուրբ Եկեղեցին, ձեր հոգևոր դասը, ձեր

ՄԻ ՊԱՀ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԻՑ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ
ԵԿԵՂԵՑՈՒՄ (13 ԱՊՐԻԼ 1980 Թ.)

ժողովուրդը և Դուք երկար, շատ երկար տարիներ շարունակեք առաջնորդել վրացական Եկեղեցու նավը:

Երկու Հայրապետների ողջագուրման հուզիչ պահին, Սուրբ Սիոն Մայր տաճարի երգչախումբը և տաճարում հավաքված ողջ ժողովուրդը երգում է «Երկար կյանք» կրոնական մաղթանքը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ապրիլի 13-ին, կիրակի, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը հավատացյալների խուռներամ բազմության ներկայության պատարագում և քարոզում է Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում:

Հայոց Հայրապետի մատուցած պատարագին ներկա է մի պատվիրակություն վրացական Եկեղեցու, Տ. Ծիո միտրոպոլիտի, Տ. Դավիթ եպիսկոպոսի գլխավորությամբ: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՊԱՏԱՐԱԳԻ ՊԱՀԻՆ

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Եղբայրական հրավերովը Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ի և մեր սրբազան Գևորգ եպիսկոպոսի՝ Ձեր թեմակալ առաջնորդի, Մեր քայլերը ուղղեցինք դեպի Թբիլիսի, Ձեզ բերելու նախ ավետիսը Քրիստոսի Հարության:

Ս. Զատիկը, Քրիստոսի Հարության հրաշքը մենք տոնում ենք տարին մեկ անգամ, սակայն հրաշքի լույսը տարածվում է ամբողջ տարվա վրա: Այնպես, որ հատկապես այս կիրակի, որ հաջորդողն է Զատկի կիրակիին, մենք առավել ևս հոգվով, սրտով լեցուն ենք այս հրաշալի, աստվածային հրաշքի խորհրդովը:

Քրիստոս մենք պաշտում ենք իբրև Աստված և իբրև Փրկիչ ազգի մարդկան: Բոլոր մարդկանց, ամբողջ աշխարհի համար եկավ Քրիստոս՝ քարոզեց ճշմարտության և արդարության մասին, քարոզեց բարության և ներողամտության մասին: Քարոզեց նամանավանդ սեր մարդկանց միջև և խաղաղություն ժողովուրդների միջև: Այն ժամանակ էլ, երկու հազար տարի առաջ, թշնամություններ կային մարդկանց, ազգությունների միջև: Պատերազմներ էին լինում, անարդարություններ էին կատարվում, մարդիկ ապրում ու տառապում էին չարիքի և մեղքերի հորձանքի մեջ:

Աստուծո Որդին՝ Հիսուս երկնքից իջավ որպեսզի մարդկանց ցույց տա կյանքի ուղիղ ճանապարհը՝ սիրո, եղբայրության, խաղաղության և արդարության ճանապարհը: Քրիստոնեական մեծ գաղափարներ, որոնք այսօր էլ այժմեական են, որովհետև մարդիկ միշտ հակված են թերություններ ունենալու, սխալներ ու մեղքեր գործելու:

Մենք խաղաղ ապրում ենք սովետական մեծ հայրենիքում, դուք՝ Վրաստանում, Մենք՝ Հայաստանում, սակայն ամեն տեղ չէ, որ աշխարհում խաղաղություն է տիրում: Ինչո՞ւ: Որովհետև անարդարություններ են գործվում, ընկերային անհավասարություններ կան, ատելություններ և բռնություններ

կան: Ահա թե ինչու այսօր էլ այժմեական են Հիսուսի պատգամները: Եվ մենք իբրև հայ ժողովրդի զավակներ, որ տառապել ենք անցյալում պատերազմների հետևանքով անցյալի այդ տխուր փորձառությունները ունենալով, առավել ևս շահագրգռված ենք որպեսզի ամբողջ աշխարհում խաղաղություն տիրի և մեր խաղաղ ու արդար կյանքը չխանգարվի: Դրա համար Քրիստոսի Հարության ավետիսը մենք հոչակում ենք գուցե ավելի համոզումով, ավելի վճռականությամբ, հոգեկան բուռն ցանկությամբ:

Վրացկան Եկեղեցին գլխավորությամբ Իլիա կաթողիկոսի և մեր հայկական Եկեղեցին Մեր օրոք աշխատում և մասնակցում են խաղաղության արդար պայքարին: Եվ հավատում ենք, որ ի վերջո խաղաղության ուժերը կհաղթանակեն ամբողջ աշխարհի մեջ և չի լինի այլևս պատերազմ ոչ մի տեղ, ոչ մի ժողովրդի համար: Եվ բոլորը կապրեն խաղաղ, համերաշխ ու երջանիկ կյանք: Ահա ինչ է թելադրում մեզ այսօր, սիրելի հավատացյալներ, Քրիստոսի Հարության ավետիսը:

Մենք գալիս ենք Սուրբ Էջմիածնից բերելու նաև ողջույն և օրհնություն Ձեզ բոլորիդ, Վրաստանի բոլոր հայ հավատացյալներիդ: Բերում ենք ողջույն և օրհնություն մեր սիրելի Գևորգ սրբազան եպիսկոպոսին՝ Ձեր հոգևոր առաջնորդին, քահանա հայրերին, եկեղեցական վարչության բոլոր անդամներին, ձեր երգչախմբին, որ այսօր իր գեղեցիկ երգով մեզ մխիթարեց այս պատարագի ընթացքում: Բերում ենք նաև մեր սիրո ողջույնը մեր վրացի հոգևոր եղբայրներին, որոնց բարձրաստիճան ներկայացուցիչներր գլխավորությամբ Տ. Շիո միտրոպոլիտի, գտնվում են այստեղ: Մեր սիրո ողջույնն ենք հաղորդում նրանց և աղոթում, որ Աստված անսասան և միշտ պայծառ պահի վրացական սուրբ, Պրավոսլավ եկեղեցին իր գլուխը ունենալով բարեսիրտ, հայրենասեր ու ժրաջան Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ը:

Թող Աստված միշտ խաղաղության մեջ պահի համայն Վրաստանը, մեր վրացի եղբայր ժողովուրդը թող միշտ երջանիկ ապրի ու նվիրվի իր հայրենիքի ծաղկումին ու վերելքին:

Մենք իբրև դրացի ժողովուրդներ, իբրև քրիստոնյա և բախտակից ժողովուրդներ, այսօր երկուսս էլ Սովետական այս դարաշրջանում վերածննդի շրջան ենք ապրում: Ահա թե ինչու Մենք ամեն անգամ ուրախությամբ ենք գալիս Թբիլիսի, որովհետև առիթն ենք ունենում կրկին ու կրկին մեր աղոթքներն ու մաղթանքները բերելու վրաց եղբայր ժողովուրդին:

Սիրելի հավատացյալներ,

Մենք գալիս ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, Հայ Եկեղեցու պատմական կենտրոնը, որին կապված են բոլոր հայերը աշխարհի վրա:

Ոչ միայն Վրաստանի հայերը, ոչ միայն Սովետական Միության տարբեր հանրապետություններում ապրող հայերը, այլև ամբողջ աշխարհի հայերը:

Եվ դուք գիտեք անշուշտ, որ մեր ազգի համարյա կեսը ապրում է աշխարհով մեկ սփռված: Եվրոպայում և Միջին Արևելքում և հեռավոր ամերիկյան երկրներում մենք ավելի քան երկու միլիոն հայեր ունենք: Ամեն տեղ մեր ժողովուրդը կառուցել է եկեղեցիներ, ինչպես դուք այստեղ: Արտասահմանում ունենք ավելի քան երեք հարյուր հայկական եկեղեցիներ, ուր արարողություններ են կատարվում և պատարագ մատուցվում:

Բոլոր հայերը հավաքվում են եկեղեցու կամարների ներքո աղոթելու համար և երգելու համար հայերեն լեզվով, ինչ դուք այստեղ:

Այսպիսով մեր Եկեղեցիով, Ս. Էջմիածնով պահպանվում է հայ ժողովրդի հոգևոր միությունը ամբողջ աշխարհում:

Մենք անցյալ տարի այցելեցինք Ֆրանսիա, ուր ապրում են մոտ 250 հազար հայեր տարբեր քաղաքներում: Ամեն տեղ Մենք մասնակցեցինք եկեղեցական արարողությունների, ուր ներկա էին հազար-հազար հայ հավատացյալներ:

Ահա Ս. Էջմիածնում Մենք աշխատում ենք մեր Եկեղեցու պայծառության, մեր ժողովրդի միասնության համար, և միշտ աղոթում ենք ու գործում աշխարհի խաղաղության համար:

Վերջացնելով Մեր խոսքը ուզում ենք ցանկություն հայտնել, որ դուք բոլորդ, Թբիլիսիի հայերդ մնաք հավատարիմ մեր Մայր Եկեղեցուն, մեր քրիստոնեական հավատքին և մեր մայրենի լեզվին: Միաժամանակ հավատարիմ քաղաքացիները, շինարար բնակիչները լինեք վրացական հանրապետության, ձեր վրացի եղբայրների և քույրերի հետ միասին ձեռք-ձեռքի տված, էլ ավելի շենացնելու համար այս գեղեցիկ երկիրը՝ Վրաստանը:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, երեկոյան, Թբիլիսիի «Արագվի» ռեստորանում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Նորին Սրբություն Իլիա Բ կաթողիկոսը կազմակերպում է ճաշկերույթ, որին ներկա են լինում Վրաց Եկեղեցու հոգևորականաց դասը, մտավորական գործիչներ, արվեստագետներ, Թբիլիսիի հայոց եկեղեցիների վարչության անդամները, հայ քահանաների դասը, թվով մոտ հարյուր հոգի:

Վեհափառ Հայրապետի պատվին տրվող ճաշկերույթին ներկա էին նաև Վրաց. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր տիար Գիվի Մայսուրաձեն և իր տեղակալ տիար Իլիա Ռուրուան:

Ճաշկերույթի ժամանակ Նորին Սրբություն Իլիա Բ կաթողիկոսը ողջույնի իր հետևյալ խոսքով առաջարկում է բաժակ բարձրացնել ի կենաց Հայոց Հայրապետի:

ԻԼԻԱ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

Ձերդ Սրբություն,

Համարյա թե անցել է երեք տարի այն օրից, ինչ Դուք եղել եք Վրաստանում: Մենք երջանիկ ենք Ձեզ տեսնելով Մեր ձեռնադրության ժամանակ:

Հիմա էլ ենք երջանիկ կրկին անգամ Ձեզ տեսնելով Վրաստանում: Եվ այս Ձեր այցելությունը նորից ապացուցում է, որ հայ և վրաց Եկեղեցիների ու ժողովուրդների եղբայրական փոխբարեկամությունը շարունակվում է: Մենք գիտենք, որ մեր հարաբերությունները այսօր չէ, որ սկսվել են: Մեր ժողովուրդները և մեր Եկեղեցիները շատ վաղուց է, որ կապված են միմյանց հետ, համարյա թե առաջին դարերից: Այն ժամանակվանից, երբ Ձեզ մոտ և մեզ մոտ ընդունվեցին սուրբ քարոզիչները քրիստոնեության: Սրա համար էլ մեր Եկեղեցիները կոչվում են առաքելական Եկեղեցիներ:

Երբ մենք հետադարձ հայացք ենք գցում մեր անցյալին, տեսնում ենք, որ հայերն ու վրացիները միանման բախտ են ունեցել, երբ դժբախտության

մեջ էր Վրաստանը, Հայաստանն էլ նույնպես դժբախտ էր և երբ ուրախության մեջ էր Հայաստանը՝ Վրաստանը ևս ուրախ էր:

Հիանալի խոսքեր ենք կարդում մենք մեր «Վրաստանի Կյանք»-ում (Քարթլիս Ցխովրեբա), որ մեր նախորդները եղբայրներ են եղել: Սա իրականություն է և շատ հաճելի իրականություն:

Եթե սա առասպել է, ապա նույնպես ուրախալի է: Սա նորից ու նորից ապացուցում է, որ մեր նախորդները սրտակից են եղել միմյանց:

Ես ուզում եմ խոսել այս վերջին ժամանակների մասին, այն 25 տարիների, որ Դուք ղեկավարում եք հայկական Եկեղեցին:

Առաջին հաղորդումը միմյանց հետ, ինչպես Դուք նշեցիք Ձեր խոսքում, Վեհափառ Տեր, դա Նորին Սրբություն Կալիստրատ Պատրիարքի օրոք էր:

Դուք հիանալի կապեր էիք հաստատել Նորին Սրբություններ Կալիստրատի, Մելքիսեդեկի, Եփրեմի և Դավիթի ժամանակ: Եվ այս սերն ու հարգանքը երկկողմանի էր:

Մենք վրացիներս շատ լավ տեսնում ենք այն մեծ աշխատանքը, այն մեծ հասարակական գործունեությունը, որ Դուք կատարում եք հայ ժողովրդին միավորելու հարցում:

Երբ ես Հայաստանում եմ լինում, Ձեր ստորադրյալներից շատ անգամ եմ իմացել, որ այն, ինչ որ չի կատարվել անցյալում, Վազգեն Ա կաթողիկոսը կատարեց քսանհինգ տարիների ընթացքում:

Շատ մեծ է Ձեր գործունեությունը, և հայ ժողովուրդը այդ հաստատել է ու գնահատում է:

Հայ Եկեղեցին և Ձեր ժողովուրդը միասնական են և եթե այդ չլիներ, Դուք այդպիսի փառք չէիք ունենա: Սրա մեջ է Ձեր Եկեղեցու և Ձեր ժողովրդի ուժը: Մենք բոլորս շատ լավ հասկանում ենք, թե ինչ մեծ դեր է կատարում Եկեղեցին նաև ժողովուրդների բարեկամության գործում:

Մենք պետք է հետևենք մեր նախորդներին, որ հոգ էին տանում մեր ժողովուրդների միասնության գործում:

Այսպիսի նախորդներ մենք ունեինք, որ մտածում էին մեր ժողովուրդների միասնության մասին, օրինակ՝ վրաց ժողովրդի կյանքում կային Իլիա Ճավճավաձեն, Ակակի Ծերեթելին:

Ես հավատում եմ, որ մեր ժողովուրդները ունեն ներքին, Աստուծո կողմից տրված այնպիսի մի հատկություն, որ կարող են եղբայրությունը շարունակել:

Հայաստանի առաքելական Եկեղեցուն ևս ցանկանում եմ փայլուն հաջողություններ: Նույնը ցանկանում եմ եղբայրական հայ ժողովրդին: Եվ Ձեզ, Ձերդ Վեհափառություն, ցանկանում եմ երկար կյանք:

Ապա Հայոց Հայրապետի կենաց բաժակին ողջույնի խոսքով միանում են վրաց շատ մտավորական ու արվեստի գործիչներ, ինչպես օրինակ, բանաստեղծ Իոսիֆ Նոնեիշվիլին, Թբիլիսիի պետական համալսարանի դասախոս Զազա Ալեքսիձեն և ուրիշներ, որոնք մեծ ջերմությամբ և սիրով նշում են այն մեծ դերը, որ այսօր ունեն հայ և վրաց Եկեղեցիները երկու ժողովուրդների բարեկամության գործում և առանձնապես՝ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության տարիներից սկսած:

Պատասխան շնորհակալական խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ, ԻՐԵՆՑ ՇՔԱԽՄԲԵՐՈՎ ԹԲԻԼԻՍԻԻ ՎՐԱՑ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԸ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

Զերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս:

Զեր եղբայրական հրավերով, անհավասիկ, մեկ անգամ ևս այցելության ենք գալիս Հայաստանից, Ս. Էջմիածնից: Գալիս ենք Ձեզ մոտ, բերելու Հայ Եկեղեցու և անձամբ Մեր ողջույնը: Եվ շնորհակալ ենք այս շատ ջերմ ընդունելության համար: Ինչպես միշտ, Վրաստանը և վրացական Եկեղեցին իր սիրտը լայն բաց է անում իր հյուրերի առջև:

Ես ամեն անգամ զգացել եմ այդ ջերմությունը, այդ անկեղծ հյուրասիրությունը:

Շնորհակալություն Ձեր քաղցր խոսքերի համար՝ ուղղված Հայ Եկեղեցուն, հայ ժողովրդին և անձամբ՝ Մեր անձին:

Շնորհակալություն, վերջապես, այս շատ հաճելի ճաշկերույթի համար: Թույլ տվեք մեկ անգամ ևս ողջունել բոլոր սեղանակիցներին: Հատկապես կուզեի ողջունել Վրաց. ՍՍՀ կրոնից գործերի լիազոր տիար Մայսուրաձեին, որի հետ Մենք առաջին անգամ ծանոթացանք այս առիթով և Մեզ համար շատ հաճելի եղավ հաստատել, որ այս բարձր պաշտոնին կոչված է իր նման պատրաստված, զարգացած և հայրենասեր մի անձնավորություն: Առաջին պահից մինչ այսօր Մենք զգացինք նաև իր կողմից սիրո ջերմություն Մեր հանդեպ, որի համար շնորհակալ ենք և կմաղթենք իրեն երկար տարիների փայլուն գործունեություն:

Այստեղ, սեղանի շուրջ կան շատ վրացի մտավորականներ: Քիչ առաջ Իլիա կաթողիկոսը ծանոթացրեց Մեզ մեծ թվով այդպիսի մտավորականների հետ: Մենք ուզում ենք հատկապես ողջունել նաև նրանց: Եվ թույլ տվեք մի դասավորում անել, երեքի բաժանելով այստեղ հավաքված մտավորականությանը:

Առաջինը Մենք ուզում ենք ողջունել այն գիտնականներին, որոնք զբաղվում են Վրաստանի պատմական հուշարձաններով:

Հնությունների պահպանության այս կոմիտեն, ինչպես Հայաստանում, Վրաստանում էլ մեծ կարևորություն և նշանակություն ունի: Կարևոր չափով, վրաց ժողովրդի ամբողջ հանճարը կարդացվում է այդ հուշարձանների վրա:

Եվ հետևաբար հոգատար լինել, երևան հանել և գեղեցիկ ու հարազատ ձևով ներկայացնել դրանք այսօրվա աշխարհին՝ դա մեծ ծառայություն է: Եվ ոչ միայն վրաց ժողովրդին, այլ նաև՝ ողջ մարդկությանը:

Երկրորդ խումբը դա նկարիչներն են, որոնք գտնվում են այժմ այստեղ:

Նկարչական տեսակետից էլ Մենք նորություններ հաստատեցինք Մեր այս այցելության առիթով Ս. Սիոնի տաճարում և Իլիա կաթողիկոսի Վեհարանում: Ուրախ ենք, որ Իլիա կաթողիկոսի օրոք այս արվեստը պիտի զարգանա վրացական Եկեղեցում: Գիտենք որ այս ուղղությամբ ապագայում մեծ հույսեր ունի Իլիա կաթողիկոսը: Մաղթում ենք հաջողություններ:

Շնորհավորում ենք նկարիչ-արվեստագետներին և մաղթում, որպեսզի նրանք իրենց տաղանդով հետագայում է՛լ ավելի ծաղկեցնեն ու շենացնեն վրացական եկեղեցիները:

Վերջապես՝ երրորդ խումբը բանասերներն են, որոնց նույնպես ուզում ենք ողջունել: Իմացանք, որ նրանք թարգմանել և շարունակում են թարգմանել Ս. Գիրքը վրացերեն արդի լեզվով: Անհավասիկ նորություն, որ Մենք հաստատում ենք ուրախությամբ:

Այդ նշանակում է, որ Վրաց Եկեղեցին և պետությունը վրաց գրական լեզուն մշակելու և ծաղկեցնելու տենչ ունեն:

Անշուշտ մեր ազգային լեզուները մեզ համար կենսական նշանակություն ունեն: Կարծում ենք, որ լեզուն հոգու բնակարանն է տվյալ ժողովրդի:

Անհավասիկ մի քանի մտածումներ, որոնք Մենք այսօր այժմեական ենք նկատում:

Մաղթում ենք, որ հետագա տասնյակ տարիներին մեր եղբայր Իլիա կաթողիկոս, Վրաց Եկեղեցին տանի հաջողությունից հաջողություն: Ինքը այն անձնավորությունն է, որը հիշտ ժամանակին եկավ Վրաց Եկեղեցու դեկը ստանձնելու:

Կեցցե վրացական Սուրբ Եկեղեցին:

Կեցցե մեր սիրեցյալ Իլիա կաթողիկոսը:

ԱՅՑ ԳՈՐԻ ԵՎ ԲՈՐԺՈՄԻ ՔԱՂԱՔՆԵՐ

Ապրիլի 14-ին, երկուշաբթի, Վեհափառ հայրապետը, հրավերով և ուղեկցությամբ Նորին Սրբություն Իլիա Բ-ի, Իր շքախմբով մեկնում է Թբիլիսիից մոտ 170 կմ հեռավորության վրա գտնվող Բորժոմի ամառանոցային քաղաք:

Ճանապարհին երկու Հայրապետները կարճատև դադարի համար կանգ են առնում Գորի քաղաքում:

Բորժոմիում Հայոց Հայրապետին բարի գալուստ են մաղթում Բորժոմիի քաղաքային սովետի նախագահ Ի. Լեգաշվիլին, հայտնի գրող Գեորգի Ռեդկենիձեն և ուրիշներ:

Հյուրանոցում քիչ հանգիստ առնելուց հետո, երկու Հայրապետները իրենց շքախմբերով այցելում են Բորժոմիից մոտ 20 կմ հեռավորության վրա գտնվող, ԺԲ դարի կառույց Ս. Տիմոթեոսի վանքը, Բորժոմիի հանքային հայտնի ջրերի գործարան (ուր Վեհափառ Հայրապետը մեծ ուշադրությամբ ունկնդրում է գործարանի տնօրենուհի տիկին Խարիս Ճիրաշվիլու բացատրությունները՝ գործարանի ունեցած նվաճումների մասին), Բորժոմիի քաղաքային այգի և այլն:

Երեկոյան, ի պատիվ երկու կաթողիկոսների, Բորժոմիի քաղաքագլուխ Ի. Լեգաշվիլու կողմից հյուրանոցի ճաշարանում տրվում է ճաշկերույթ, որին ներկա էին նաև Վրաց. ՍՍՀ կրոնական գործերի լիազոր Գ. Մայսուրաձեն, Բորժոմի քաղաքի մտավորական գրոծիչներ, իշխանության ներկայացուցիչներ:

Ճաշկերույթին բաժակաճառերով հանդես եկան ներկաներից շատերը, ողջունելու համար երկու Հայրապետների օրհնաբեր ժամանումը այս գեղեցիկ քաղաք: Պատասխան շնորհակալական խոսքով հանդես եկան Նորին Սրբություն Իլիա Բ-ն և Հայոց Հայրապետը:

Հաջորդ օրը, ապրիլի 15-ին, Վեհափառ Հայրապետը Նորին Սրբություն Իլիա Բ կաթողիկոսի և Իր ուղեկցողների հետ վերադարձավ Թբիլիսի:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նույն օրը, կեսօրին, հրաժեշտ առնելով Իլիա Բ կաթողիկոսից և վրացական երկրից, Հայոց Հայրապետը մեքենայով Իր շքախմբի հետ վերադարձավ Մայր Աթոռ լավագույն տպավորություններով:

Հայոց Հայրապետի օրհնաբեր այցելությունը Վրաստան մեծ ոգևորություն պատճառեց տեղի հայ հավատացյալ ժողովրդին: Միաժամանակ այն մեկ անգամ ևս հաստատեց ու ամրապնդեց հայ և վրաց Եկեղեցիների և ժողովուրդների դարավոր եղբայրությունն ու բարեկամությունը:

ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ԱՐԱԲԱՋՅԱՆ





ՍՈՒՐԲ ՋԱՏԿԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 6-ին, կիրակի. Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Վաղ առավոտից բազմահազար ուխտավորներ, եկած Երևանից, Հանրապետության զանազան շրջաններից և Միության այլ քաղաքներից, լցրել էին Մայր տաճարը և վանքի շրջափակը:

Գարնանային պայծառ, արևոտ օր է:

Ժամը 11-ին հնչում են Մայր տաճարի զանգերը՝ ավետելով Քրիստոսի հրաշափառ Հարությունը:

Հայոց Հայրապետը զգեստավորված, եկեղեցական թափորով, զանգերի տոնական ղողանջների ներքո և հավատացյալների խանդավառ արտահայտությունների մեջ, Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու օրվա հանդիսավոր ս. պատարագը:

Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ էին գրավել ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած ֆրանսահայ, ամերիկահայ, լիբանանահայ և իրանահայ բազում ուխտավորներ:

Հյուրերի թվում էին նաև Վալանսի (Ֆրանսիա) քաղաքագլուխ Ռուդոլֆ Պեսը, ի գլուխ ֆրանսիացի և հայ զբոսաշրջիկների խմբի, Մոսկվայում ԱՄՆ-ի դեսպանատան առաջին քարտուղար Էդուարդ Ճերեճյանը՝ իր տիկնոջ հետ, և Վալանսի եկեղեցական վարչության նախագահ Մանուկ Ստեփանյանը:

Ս. պատարագին ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը, տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի պատասխանատու աշխատողները և այլ հրավիրյալներ:

Ս. պատարագը հանդիսավորությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Քարոզի պահ է: Պատարագիչ Հայոց Հայրապետը, տալով Քրիստուի հրաշափառ Հարության ավետիսը, շնորհավորում է համայն հայության, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի, Զատիկը և խոսում իր ոգեշունչ և գեղեցկահյուս քարոզներից մեկը՝ նվիրված օրվա տոնին և նրա խորհրդին:

Նույն օրը, երեկոյան ժամը 23-ին, Նորին Սրբության քարոզը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից (Հայոց Հայրապետի զատկական քարոզը լույս է տեսել



ՄԻՍԵՌՆԱԿԱԲԵՐԴ. ԱՊՐԻԼԻ 24-ԻՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՎԱՌՎՈՂ ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆ ԿՐԱԿԻ ԱՌԱՋ

«Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

Ս. պատարագի վերջավորության բազմահազար ուխտավորներ Հայոց Հայրապետի ձեռքից ս. Հաղորդություն են ստանում:

Եկեղեցական արարողությունից հետո թափորով և հանդիսավորապես, Հայոց Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր մեկ անգամ ևս շնորհավորում է Ս. Ջատկի տոնը՝ ողջունելով մանավանդ սփյուռքահայ ուխտավորների և հյուրերի ներկայությունը Մայր Աթոռում:

Ներկաները աջահամբույրով շնորհավորում են Նորին Սրբության տոնը:

Ժամը 15-ին, Ջատկի տոնի առիթով, Վեհարանի սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին մասնակցում են ավելի քան 30 հրավիրյալներ, այդ թվում՝ Վալանսի պարոն քաղաքագլուխը, վալանսահայ ուխտավորների խումբը, Մոսկվայում ԱՄՆ-ի դեսպանատան քարտուղար Էդուարդ Ծերեճյանը իր տիկնոջ հետ, տեր և տիկին Տանձիկյանները (Բելգիայից) և այլ հրավիրյալներ:

Ջատկական ճաշին ներկա էին Տ. Սիոն, Տ. Կոմիտաս, Տ. Արսեն սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի և միաբանության անդամները, Մայր Աթոռի ղեկավար պաշտոնյաները, Մայր Աթոռին առընթեր Ծարտարապետների հանձնաժողովի անդամները:

Ճաշին հրավիրվել էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռ. Պարսամյանը, տեղակալ Ա. Հասրաթյանը:

Ճաշկերույթի ընթացքում, հանուն Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի, Գերագույն հոգևոր խորհրդի և Մայր Աթոռի միաբանության, Հայոց Հայրապետի Ջատիկը ջերմ և սրտագին բարեմաղթություններով շնորհավորում է Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Բոլոր ներկաները հոտնկայս բաժակ են բարձրացնում Հայոց Հայրապետի արևշատության և Մայր Աթոռի պայծառության ու անսասանության համար:

Ս. Հարության տոնի առթիվ Նորին Սրբությանը շնորհավորում են Էդուարդ Ծերեճյանը, Վալանսի քաղաքապետ Ռուդոլֆ Պեսը, Մանուկ Ստեփանյանը, Գերագույն հոգևոր խորհրդի նորընտիր անդամ Հայկ Մելքոնյանը և Արարատյան թեմի եկեղեցական վարչության նախագահ Վալտեր Արամյանը:

Վերջում Հայոց Հայրապետը շնորհակալություն է հայտնում արտահայտված ազնիվ ու ջերմ խոսքերի համար ու բաժակ բարձրացնում բոլոր ներկաների քաջառողջության և հաջողության համար:

Ջատկական ս. սեղանն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և աղոթքով:

ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՎԱԹՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլ 24, հինգշաբթի օր...

«Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի»:

Ապրիլյան եղեռնի 65-րդ տարելիցն է:

Մայր հայրենիքում թե սփյուռքի տարածքի վրա ամեն տարի ապրիլի 24-ին համայն հայ ժողովուրդը նշում է հայ տառապանքի և մեր հավաքական նահատակության տարելիցը և հարգանքով իր գլուխն է խոնարհում սուրբ հիշատակի առաջ իր այն զավակների, որոնք ընկան «Վասն Յիսուսի եւ վասն հայրենեաց» մղվող պայքարում՝ զոհ գնալով 1915 թվականի անլուր ցեղասպանության:

Վաթսունհինգ տարիներ առաջ թշնամին փորձեց արևմատահայության վրա արձակել «ամբողջ չարիքն աշխարհի» և ողջ-ողջ գերեզմանել հայությունը, նրա պատմական հայրենի հողերի վրա, ուր նա դարեր ու դարեր շարունակ ապրել ու ստեղծագործել էր:

Այսօր, եղեռնից վաթսունհինգ տարիներ հետո էլ, կա՛, ապրո՛ւմ և ստեղծագործո՛ւմ է հայ ժողովուրդը թե՛ իր վերածնված մայր հայրենիքում և թե՛ սփյուռքի տարածքի վրա:

Անցան 65 տարիներ: Հայության մեծ վիշտը՝ նահատակությունը, վերածվեց գոյատևման ուժի, ստեղծագործական կամքի, կրկին ապրելու և հավերժելու անկոտրում հավատքի:

Երևան: Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա վեր է խոյանում Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակին նվիրված հոյակապ հուշարձանը, երկինք սլացող սյուներով, որոնք խորհրդանշում են հայ ժողովրդի այսօրվա ազգային վերածնունդը:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը, ի գլուխս Մայր Աթոռի միաբանության, այցելում է Ծիծեռնակաբերդ և Եղեռնի զոհերի հիշատակին ծաղկեպսակ դնում նրանց հուշարձանին և լուռ՝ «Հոգւոց» արտասանում:

Ներկա են նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռ. Պարսամյանը և տեղակալ Ա. Հասրաթյանը:

Ժամը 12-ն է: Մայր տաճարում, Նահատակաց սուրբ սեղանի վրա, պատարագ է մատուցում Տ. Մասիս վրդ. Գալստյանը և իր սրտառուչ քարոզով ոգեկոչում հիշատակը նահատակների:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, մայրավանքի ողջ աշխատավորությամբ և հավատացյալների հոծ բազմությամբ:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը, ի գլուխ եկեղեցական թափորի, առաջնորդվում է մայրավանքի հյուսիսային կողմում կառուցված **Ուխտի և Աղոթքի** նահատակաց հուշարձան և նախագահում հոգեհանգստյան արարողությանը:

Նույն օրը, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, ծաղիկներ ի ձեռին, բազմահազար ժողովրդի հետ բարձրանում է Ծիծեռնակաբերդ:

Երևան: Ժամը 19-ն է: Ողջ Հանրապետության մեջ հայտարարվել է **լռության րոպե:** Հայրենաբնակ ողջ հայությունը, մեկ սիրտ և մեկ հոգի, հպարտ լռությամբ իր հարգանքն է մատուցում մեր նահատակաց սուրբ հիշատակին:

Փա՜ռք և հարգա՜նք քեզ, երեկ նահատակված, այսօր հրաշափառապես վերածնված Հայոց աշխարհ, և քեզ, ազգ իմ սիրելի՛, ժողովուրդ հայոց:

ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ս/թ. ապրիլի 22—23 օրերին հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում տեղի է ունենում հոգևոր ճեմարանի 1978 և 1979 թվականների շրջանավարտների դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանությունը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետի:

Հանդիսություններին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և բազմաթիվ հրավիրյալներ:

Հանդիսություններին ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսություններն սկսվում են ապրիլի 22-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանի բացման խոսքով:

Այնուհետև պատմա-բանասիրական թեքում ունեցող ավարտաճառերի քննարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ հոգևոր ճեմարանի ուսմասվար Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանի և անդամակցությամբ հոգևոր ճեմարանի դասախոսներ տիարք Պարգև Շահբազյանի, Սամվել Անթոնյանի և Երվանդ Մելքոնյանի, ներկաներին հաղորդեց քննիչ հանձնաժողովի եզրակացությունները գրավոր աշխատանքների վերաբերյալ:

Այնուհետև իրենց աշխատանքների բանավոր պաշտպանությամբ հանդես եկան իրենց դիպլոմային աշխատանքները ներկայացրած շրջանավարտները՝ հանգամանորեն ներկայացնելով իրենց կատարած աշխատանքը և ապա պատասխանելով հանձնաժողովի անդամների հարցերին:

Հանդիսությունների երկրորդ օրը, ապրիլի 23-ին, չորեքշաբթի, քննարկվեցին կրոնա-աստվածաբանական բնույթ ունեցող աշխատանքները: Այս աշխատանքների քննիչ հանձնաժողովն ուներ հետևյալ կազմը. նախագահ՝ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյան, անդամներ՝ հոգևոր ճեմարանի դասախոսներ Տ. Անանիա վրդ. Արաքաջյան, Տ. Ստեփանոս աբդ. Զաքալյան և Տ. Արտակ քհն. Սիմոնյան:

Ստորև համառոտակի կերպով ներկայացնում ենք կատարված դիպլոմային աշխատանքները և հանձնաժողովների նշանակած գնահատականները:

Առաջին օր, ապրիլի 22-ին, երեքշաբթի:

Իրենց դիպլոմները պաշտպանեցին հետևյալ շրջանավարտները.

1.—**Տ. Մանուկ քահանա Մարգարյան.**

«Նոր Ջուղայի գաղթօջախը», ղեկավար՝ դասախոս Բարսեղ Թաշչյան:

Աշխատասիրությունը բաղկացած է 129 մեքենագիր էջից և ունի հետևյալ գլուխները.

ա) Սեֆյան Պարսկաստանը (էջ 3—7).

բ) Հայերի ազատագրական ձգտումները և ռուսական գործոնը (էջ 8—18).

գ) Շահ-Աբասի պատերազմները և հայերի բռնագաղթը (էջ 19—27).

դ) Նոր Ջուղան (էջ 28—39).

ե) Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորումը (էջ 40—45).

զ) Նոր Ջուղան որպես հայկական մշակույթի կենտրոն.

Հայկական տպագրություն (46—90)

Արվեստները Նոր Ջուղայում, արվեստի գործիչներ (91—123)

Փիլիսոփայություն—Սիմեոն վրդ. Ջուղայեցի (էջ 124—127):

Ներկայացված գրավոր աշխատանքը գնահատվեց «լավ», բանավոր պաշտպանությունը՝ նույնպես «լավ», ընդհանուր միջինը՝ «լավ»:

2.—**Գրիգոր սարկավագ Հաջյան.**

«Արմաշի դպրեվանքը», ղեկավար՝ դասախոս Արթուն Հատիտյան:

Աշխատությունը բաղկացած է 41 մեքենագիր էջից և ունի հետևյալ գլուխները.

ա) Արմաշի դպրեվանքի հիմնադրությունը, 1610 թ. (էջ 3—4).

բ) Նոր շրջան (1889—1914), Արմաշի դպրեվանքի վերաբացումը (էջ 5—16).

գ) Ընդհատումի շրջան (էջ 17—22).

դ) Ետդուրյանական շրջան (էջ 23—37):

Ներկայացված գրավոր ավարտաճառը գնահատվեց «բավարար», բանավոր պաշտպանությունը՝ նույնպես «բավարար», ընդհանուր միջինը՝ «բավարար»:

3.—**Վահրամ սարկավագ Տերտերյան.**

Աշխատանքի թեման է՝

«Վրթանես Քերթող և նրա մատենագիտական վաստակը»՝ ղեկավար՝ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյան:

Աշխատությունը բաղկացած է 78 մեքենագիր էջից և ունի հետևյալ բաժինները:

ա) Ներածություն (էջ 1—5).

բ) Վրթանես Քերթող (էջ 6—12).

գ) Վրթանես Քերթող և նրա վարչական դերը (էջ 13—15).

դ) Հայ և վրացական եկեղեցական հարաբերություններում Վրթանես Քերթողի դերը (էջ 16—20).

ե) Հայ և Աղվանից եկեղեցական հարաբերություններում Վրթանես Քերթողի դերը (էջ 21—23).

զ) Վրթանես Տեղապահ և Աբրահամ կաթողիկոսի ընտրությունը (էջ 24—27).

է) Վրթանեսի տեսակետը պատկերահարգության հարցում (էջ 28—31).

ը) Վրթանես Քերթողի մատենագրական վաստակը (էջ 32—44).

թ) Վրթանեսի Քրիստոսաբանությունը (էջ 45—46).

ժ) Վրթանես Քերթողի թղթերի համեմատական բնագրերը (էջ 46—75):

Ներկայացված գրավոր ավարտաճառը գնահատվեց «լավ», բանավոր պաշտպանությունը՝ նույնպես «լավ», ընդհանուր միջինը՝ «լավ»:

4.—**Խաչիկ սարկավագ Խարազյան.**

Աշխատանքի թեման է «Հառիճա վանքը», ղեկավար՝ դասախոս Արտաշես Մաթևոսյան:

Աշխատությունը բաղկացած է 56 մեքենագիր էջից և ունի հետևյալ բաժինները.

ա) Գլուխ Ա. Ծիրակի պատմա-աշխարհագրական համառոտ ակնարկ (էջ 2—5).

բ) Գլուխ Բ. Ծիրակի վանքերի և եկեղեցիների մասին համառոտ ակնարկ (էջ 6—13).

գ) Գլուխ Գ. Հառիճա վանք (էջ 14—31).

դ) Հավելված Ա. Հառիճա վանքում գտնված ձեռագրերը և նրանց հիշատակարանները (էջ 32—44).

ե) Հավելված Բ. Հառիճա վանքի վիմագրությունները և տապանագրերը (էջ 45—54):

Ներկայացված գրավոր ավարտաճառը գնահատվեց «լավ», բանավոր պաշտպանությունը՝ «գերազանց» ընդհանուր միջինը՝ «լավ»:

5.—**Խաչիկ սարկավագ Մարտիրոսյան.**

Աշխատանքի թեման է «Բարբառների կրոնական բառապաշարը», ղեկավար՝ դասախոս Երվանդ Մելքոնյան:

Աշխատությունը բաղկացած է 67 մեքենագիր էջից և ունի հետևյալ բաժինները.

ա) Ներածություն (էջ 2—6):

բ) Բարբառների բառապաշարի ընդհանուր բնութագիրը (էջ 6—10).

գ) Բարբառների կրոնական բառապաշարի ընդհանուր նկարագիրը (էջ 10—13).

դ) Բարբառների կրոնական բառապաշարի դասակարգման հարց (էջ 13—18).

ե) Բարբառների կրոնական բառապաշարի իմաստային դասակարգումը (էջ 18—25).

զ) Հավելված—բերված է հայկական բառարաններում համեմատաբար լայն տարածում գտած բառերի ցանկը (էջ 26—66):

Ավարտաճառի և՛ գրավոր, և՛ բանավոր պաշտպանությունները գնահատվեց «լավ», ընդհանուր միջինը՝ «լավ»:

Երկրորդ օրը, ապրիլի 23-ին, չորեքշաբթի:

Կրոնա-աստվածաբանական աշխատանքներ.

6.—**Հովսեփ սարկավագ Պալըգյան.**

Աշխատանքի թեման է՝ «Եկեղեցականներին վերաբերող կանոնները Մխիթար Գոշի Դատաստանագրքում», ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Խոսրով Թորոսյան:

Աշխատությունը բաղկացած է 35 մեքենագիր էջից և ունի հետևյալ գլուխները.

ա) Մխիթար Գոշի կյանքն ու գործը (էջ 1—9).

բ) Իրավունքներ և պարտականություններ, որոնք վերաբերվում են բոլոր աստիճանի հոգևորականներին, և պահանջներ, որ ներկայացվում են նրանց (էջ 10—13).

գ) Սարկավագի իրավունքներն ու պարտականությունները (էջ 14—15).

դ) Քահանայի իրավունքներն ու պարտականությունները (էջ 16—18).

ե) Վարդապետի իրավունքներն ու պարտականությունները (էջ 19—22).

զ) Եպիսկոպոսի իրավունքներն ու պարտականությունները (էջ 23—29).

է) Կաթողիկոսի իրավունքներն ու պարտականությունները (էջ 29—32):

Ավարտաճառի ներկայացված գրավոր աշխատանքը գնահատվեց «բավարար», բանավոր պաշտպանությունը՝ «լավ», ընդհանուր միջինը՝ «լավ»:

7.—Արա սարկավագ Ճլուկյան.

Աշխատանքի թեման է՝ «Անմահության գաղափարը Պղատոնի «Ֆեդոն» գործի մեջ և Նոր Կտակարանում», ղեկավար՝ դասախոս Ստեփանոս աբդ. Չաքալյան:

Աշխատությունը բաղկացած է 51 մեքենագիր էջից և ունի հետևյալ գլուխները.

ա) Սոկրատի և Պղատոնի ապրած ժամանակաշրջանը (էջ 3—14).

բ) Սոկրատ-պղատոնյան ուսմունքը գաղափարների մասին (էջ 15—18).

գ) Պղատոնի «Ֆեդոն» գործի մասին (էջ 18—21).

դ) Հոգի և անմահություն ըստ Պղատոնի (էջ 22—30).

ե) Պղատոնի բերած ապացույցները հոգու անմահության մասին (էջ 31—38).

զ) Անմահության գաղափարը Նոր Կտակարանում (էջ 39—48).

է) Եզրակացությունները (էջ 49—50):

Ներկայացված գրավոր աշխատանքը և բանավոր պաշտպանությունը գնահատվեցին «լավ», ընդհանուր միջինը՝ «լավ»:

8.—Վաչագան սարկավագ Ավետիքյան.

Աշխատանքի թեման է՝ «Ստեփանոս Օրբելյան. Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն և նրա նորագյուտ հատվածները, ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու Սուրեն Քոլանջյան:

Աշխատությունը բաղկացած է 78 մեքենագիր էջից և ունի հետևյալ բաժինները:

ա) Ստեփանոս Օրբելյանի կյանքն ու գործունեությունը (էջ 1—5).

բ) Ստեփանոս Օրբելյանի մատենագրական վաստակը (էջ 6—9).

գ) «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն, ժողովածուի գրության դրդապատճառը, ժողովածուի հրատարակությունը և ձեռագրերը (էջ 10—23).

դ) «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի նորագյուտ հատվածները (էջ 24—29).

ե) «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի Մատենադարանի ձեռագրերի բովանդակությունը (էջ 31—48).

զ) Հավելված. Նորագյուտ հատվածների համեմատական բնագրեր.

1. Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն (7 ձեռագրերի համեմատությամբ, էջ Ա—Ժ).
2. Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն (7 ձեռագրի համեմատությամբ, էջ ԺԱ—ԺԶ).
3. Պատճառ տաւնի Սրբոյ Հոգւոյն, եթէ ընդէ՞ր մի աւր տաւնեմք եւ ոչ ութ ըստ այլազգ քրիստոնէից, եւ յինչ դէմս հայի միոյ աւուր խորհուրդն: Եւ այս ի խնդրոյ Տեառն Յովհաննէսի Բջնոյ եպիսկոպոսի (3 ձեռագրերի համեմատությամբ, էջ ԺԷ—ԻԴ):

Ավարտաճառի ներկայացված գրավոր աշխատանքը գնահատվեց «գերազանց», բանավոր պաշտպանությունը՝ նույնպես «գերազանց», ընդհանուր միջինը՝ «գերազանց»:

9.—Հրաչ սարկավագ Ողլուգյան.

Աշխատանքի թեման է՝ «Քրիստոսաբանությունը Հարության շարականներում», ղեկավար՝ դասախոս Տ. Անանիա վրդ. Ադրաբաջյան:

Աշխատությունը բաղկացած է 122 մեքենագիր էջից և ունի հետևյալ գլուխները:

ա) Ներածություն (էջ 1—27).

բ) Գլուխ Ա. Քրիստոսը Հարության շարականներում.

1. Սուրբ Երրորդության երկրորդ անձը (էջ 28—38).
2. Սուրբ Երրորդության երկրորդ անձի դերը Արարչագործության մեջ (էջ 39—45).

գ) Գլուխ Բ. Փրկագործության խորհուրդը.

1. Փրկչի մարդեղության խորհուրդը, Աստվածահայտնություն (էջ 45—54).
2. Քրիստոսի բնությունների հարցը, հայ շարականներն ընդդեմ հերետիկոսների (էջ 54—66).
3. Խորհուրդ չարչարանաց (էջ 66—91).

դ) Գլուխ Գ. Ավարտ փրկագործության, Վախճանաբանություն.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՀՈԳԵՎՈՐ ՄԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԸ, ՈՒՍՄԱՍՎԱՐ Տ. ԵԶՆԻԿ ՔՀՆ. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ՝ 1979 թ. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

1. Քրիստոսի Հարությունը (էջ 92—103).
2. Քրիստոսի Համբարձումը (էջ 103—109).
3. Փրկչի Երկրորդ Գալուստը (էջ 110—116):

Ավարտաճառի ներկայացված գրավոր աշխատանքը գնահատվեց «գերազանց», բանավոր պաշտպանությունը՝ նույնպես «գերազանց», ընդհանուր միջինը՝ «գերազանց»:

Հանդիսությունների ավարտին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր հայրապետական օրհնությունը բաշխեց հոգևոր ճեմարանի դիպլոմներին արժանացած շրջանավարտներին և բարձր գնահատեց կատարված աշխատանքները:

Այնուհետև վերջիններս, ներկաների բուռնը ծափահարությունների ներքո, Վեհափառ Հայրապետից աջահամբույրով ստացան հոգևոր ճեմարանն ավարտելու վկայականները և նվերներ:

Հանդիսություններն ավարտվեցին Վեհափառ Հայրապետի արտասանած «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 3-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի. Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր, առավոտյան, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

«Հայր մեր»-ից առաջ ընթերցվում է Ս. Բարսեղ Հայրապետի Հաղորդության նվիրված ճառը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում Տ. Արսեն եպս. Բերբերյանը կատարում է «Ոտնալուայի» կարգը:

Ժամը 19-ին սկսվում է մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի «սոսկալի չարչարանաց և խաչելութեան» հիշատակին նվիրված Ավագ ուրբաթի արարողությունը կամ «Խավարման կարգը»:

«Փառք ի բարձունս»-ից հետո քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ վեր հանելով մատնության գիշերվա բարերար և փրկարար նշանակությունը:

*
* *

Ապրիլի 4-ին, ուրբաթ.—Աւագ ուրբաթ. Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Առավոտյան Մայր տաճարում կատարվում է «Կարգ խաչելութեան» արարողությունը:

Երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում կատարվում է «Թաղման կարգը» և ապա մեծ հանդիսությամբ՝ «Թափոր թաղմանն»՝ նախագահությամբ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի:

*
* *

Ապրիլի 5-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ. Ճրագալոյց Զատկի.

Այսօր, երեկոյան, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, Ճրագալույցի ս. պատարագ է մատուցում Տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ս. պատարագից առաջ հոգևոր ճեմարանի չորս սաներ ընթերցում են Դանիել մարգարեի «Երից մանկանց» օրհներգությունը, որի ավարտին Հարության ավետիսով բացվում է Ավագ խորանի վարագույրը և սկսվում իրիկնադեմի խորհրդավոր ս. պատարագը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Զատկի նախատոնակի արարողությունը, և Մայր տաճարի մեջ հնչում է Հարության մեծ ավետիսը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց...»:

Այնուհետև վանական սեղանատանը Մայր Աթոռի միաբանները և հոգևոր ճեմարանի ուսանողությունը միասին ճաշակում են Զատկի նավակատիքի ընթրիքը:

*
* *

Ապրիլի 7-ին, երկուշաբթի.—Աշետումն Ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Ապրիլի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրա-

պետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Ապրիլի 13-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակէ).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբդ. Զաքալյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմների բյուրավոր նահատակների հիշատակին:

Ապրիլի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Անանիա վրդ. Արաքաջյանը խոսում է Նորին Սրբության Վրաստան կատարած հովվապետական այցելության մասին:

*
* *

Ապրիլի 17-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը Տոկիոյի «The Yomiuri Shimbun» ճապոնական մեծագույն օրաթերթի խմբագիրներ Կոզո Կիմուրայի և Յոշինորի Տանդոյի ու զրույց ունեցավ նրանց հետ:

Հայոց Հայրապետը բարեհաճեց պատասխանել հարգելի լրագրողներին հետաքրքրող հարցերին, որոնք կապված էին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության ու առաքելության հետ:

*
* *

Ապրիլի 20-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ կիրակէ).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սաղմ. ՃԼԲ) բնաբանով՝ եղբայրական Վրաստան կատարած հովվապետական Իր այցելության մասին քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Ապրիլի 26-ին, շաբաթ.—Այսօր, առավոտյան, Վեհարանում Վեհափառ Հայրապետին են այցելում Բեյրութում լուս տեսնող «Արարատ» թերթի խմբագիր Ժիրայր Նաիրին և հասարակական գործիչ Ավետիս Դեմիրճյանը:

*
* *

Ապրիլի 27-ին, կիրակի.—Կարմիր կիրակէ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Անանիա վրդ. Արաքաջյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր տաճար և Վեհափառ Հայրապետին են այցելում հայ ուխտավորներ Ֆրանսիայից, Անգլիայից, Ամերիկայից, Լիբանանից, Սիրիայից, Իրանից և այլ վայրերից՝ շուրջ 300 հոգի:

*
* *

Ապրիլի 29-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19.30-ին, Վեհարանում տեղի է ունենում դասախոսություն «Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանները» թեմայով: Հանդես է գալիս պարսկահայ ճարտարապետ, Գերմանիայի համալսարանի դասախոս Արմեն Հախնազարյանը:

Վերջում հարգելի դասախոսը հանգամանորեն պատասխանում է ներկաների տված հարցերին:



ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Իրաքի հայոց թեմի առաջնորդարանի դիվանի կողմից Մայր Աթոռ ուղարկված պաշտոնական մի հաղորդագրությունից քաղվածաբար «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք հանձնում մի շարք տեղեկություններ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և Իրաքի հայոց թեմի Ազգային Կեդրոնական Վարչության հրավերով, 1979 թ. ապրիլի 27-ին Իրաքի հայոց թեմի առաջնորդական տեղապահ է նշանակվում Նյու Ջըրզիի (ԱՄՆ) Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ և Մայր Աթոռի միաբան Տ. Ավագ վարդապետ Ասատուրյանը, որը ձեռնհասորեն վարում է այդ պաշտոնը ժամանակավորապես:

1979 թ. նոյեմբերի 28-ին Բաղդադում գումարվում է Իրաքի հայոց Ազգային Կեդրոնական Վարչության և շրջանների թաղական խորհուրդների խառն ժողովը և միաձայնությամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ ընտրվում Տ. Ավագ վրդ. Ասատուրյանը՝ չորս տարվա համար:

Սույն արժանավոր ընտրության արդյունքը պաշտոնական գրությամբ ուղարկվում է Իրաքի կառավարությանն առընթեր Կրոնական և Կալվածոց մինիստրություն՝ առ ի վավերացումն:

1980 թ. ապրիլի 11-ին, ուրբաթ օրը, արդեն ստացվել էր կառավարական վավերացումը, որը հաստատում էր Տ. Ավագ վարդապետի առաջնորդական պաշտոնը:

Այս առթիվ Իրաքի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում տեղի է ունենում հանդիսություն, որին ներկա է լինում նաև Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, որը հովվական այցելությամբ գտնվում էր Իրաքում:

Հանդիսության ժամանակ հետևյալ իր ուխտն է կատարում նորընտիր առաջնորդ հայրը՝ Ս. Սեղանի առաջ ծնրադիր:

«Ես, Աւագ Վարդապետ, նորընտիր առաջնորդ Իրաքահայ թեմիս, ուխտեմ եւ խոստանամ առաջի Աստուծոյ եւ Սրբուհւոյ Աստուածածնին եւ առաջի Սուրբ Հայրապետաց Հայաստանեայց Եկեղեցւոյ. նաեւ առաջի Աստուածընտիր Հայրապետին մերոյ Տեառն Տեառն Վազգենի Առաջնոյ Կաթողիկոսին Ամենայն Հայոց եւ ի ներկայութեան հոգևոր դասու եւ հաւատացեալ ժողովրդեան՝ կալ եւ մնալ ցմահ հաւատարիմ միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ կատարեալ հնազանդութեամբ ու կրօնաւորական ողջախոհութեամբ ծառայել Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ եւ Հայկազնեայց Ազգիս Հայոց:

Այլ եւ ուխտեմ հաւատարիմ քաղաքացին մնալ Իրաքի օրհնեալ հողին եւ հանդիսանալ օգնական անոր բարեխնամ իշխանութեանց: Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:

Ուխտի կատարումից հետո եկեղեցու զանգերի ղողանջների և երգեհոնի ընկերակցությամբ կատարվում է «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը, և Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը նորընտիր առաջնորդին հանձնում է առաջնորդական պաշտոնական «ասան» և նրան առաջնորդում առաջնորդական Աթոռ:

1980 թ. փետրվարի 7-ին նորընտիր առաջնորդ Տ. Ավագ վրդ. Ասատուրյանն այցելում է Բասրայի հայ համայնք՝ ընկերակցությամբ Տ. Օշական քհն. Գրլրճյանի: Հաջորդ օրը առաջնորդ հայր սուրբը Հայ Երիտասարդաց Միության սրահում ներկա է գտնվում իրաքյան հեղափոխության տարեդարձի հանդիսությանը և խոսք առնելով շեշտում՝ Իրաքի համար այդ հեղափոխու-

թյան կարևոր խորհուրդը և արձանագրած աննախընթաց բարիքները Իրաքի ժողովրդի համար:

Բասրայում գտնված օրերին, ուրբաթ օրը, փետրվարի 8-ին, առաջնորդ հայրը ս. պատարագ է մատուցում Վարդանանց տոնի առիթով և քարոզով ոգեկոչում Վարդանանց հերոսների հիշատակը:

Փետրվարի 10-ին, կիրակի օրը, Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, Վարդանանց տոնի առիթով, ս. պատարագ է մատուցում Տ. Ավագ վարդապետը և քարոզում օրվա տոնի խորհրդի և ազգային հայրենասիրական նշանակության մասին:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առիթով, կատարվում է Հայրապետական մաղթանք:

Մարտի 7-ին, ուրբաթ օրը, կատարվում է մասնավոր հոգեհանգիստ Իրաքի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում՝ Իրաքի հայոց նախկին առաջնորդ Տ. Ասողիկ արքեպ. Ղազարյանի մահվան տարելիցի առթիվ:

Ջերմորեն շնորհավորում ենք Իրաքի հայոց առաջնորդ Տ. Ավագ վարդապետի արժանավոր սույն ընտրությունը և բարեմաղթում, որ նրա առաջնորդության տարիներին Իրաքի հայ համայնքը, ազգային եկեղեցական ու մշակութային կյանքը է՛լ ավելի պայծառանա՝ ի մխիթարություն հավատացյալ հայ ժողովրդի և ի բարօրություն Իրաքի արաբ հյուրընկալ ազնիվ ժողովրդի հայրենական հաջողությունների:

ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ վարդապետ Ասատուրյանի և Ազգային Կեդրոնական Վարչության հրավերով Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը հովվական այցելության է մեկնում Իրաքի հայոց թեմ՝ տանելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և նախագահելու Ավագ շաբաթվա և Ս. Զատկի արարողություններին:

Մարտի 29-ին, շաբաթ օրը, Հուսիկ սրբազանը ժամանում է Բաղդադ և դիմավորվում առաջնորդ հոր, Ազգային Կեդրոնական Վարչության անդամների, հոգևորականության կողմից և առաջնորդվում մայրաքաղաքի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով:

Երեկոյան ժամերգության ավարտին Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը ներկա ժողովրդին փոխանցում է Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները: Ապա առաջնորդվում է առաջնորդարանի դահլիճ, ուր նրա ժամանումը ողջունում են թեմի պատասխանատու անձինք:

Մարտի 30-ին Ազգային Կեդրոնական Վարչության նախագահ դոկտ. Հասրաթ Միքայելյանն իր բնակարանում պաշտոնական ընդունելություն է կազմակերպում ի պատիվ սրբազան հոր:

Մարտի 31-ին, երկուշաբթի օրը, սրբազանը, ընկերակցությամբ Տ. Ավագ վարդապետի, հովվական այցելություն է տալիս Մուսուլի հայ համայնքին և տեղի Ս. Էջմիածին եկեղեցում հավաքված բազմությանը հաղորդում Հայոց Հայրապետի ողջույնն ու օրհնությունները: Երեկոյան Մուսուլի հայ համայնքը ճաշկերույթով պատվում է Մայր Աթոռի ներկայացուցչին:

Մուսուլում գտնված օրերին Տ. Հուսիկ արքեպիսկոպոսն ընդունում է բարիգալըստյան այցելությունը տեղի ասորի կաթոլիկ և ասորի օրթոդոքս եկեղեցիների առաջնորդների:

Ապրիլի 1—4 օրերին սրբազանը և առաջնորդ հայրը այցելության են մեկնում Դըհոգ և Զախո և ապա Քերքուկ: Ամենուրեք Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը հաղորդում է Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և ի դեմս Հայոց Հայրապետի՝ արժանանում խանդավառ ընդունելության և բարեմաղթությունների:

Բաղդադ վերադառնալով սրբազանը Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում նախագահում է Ավագ հինգշաբթի եկեղեցական արարողություններին, կատարում Ոտնլվայի կարգը և գիշերը նախագահում Հրսկման արարողությանը:

Տ. Հուսիկ սրբազանը ապրիլի 6-ին, Ս. Հարության հրաշափառ տոնի առիթով, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ս. պատարագ է մատուցում՝ խուռներամ հայ հավատացյալների ներկայությամբ:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանն ընթերցում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի զատկական քարոզը, որը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Այնուհետև պատարագիչ սրբազանն ըն-

թերցում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը, որով նորընտիր առաջնորդին իրավունք էր տրվում կրելու մանուշակագույն ծաղկյա փիլոն: Տ. Ավագ վարդապետը բարձրանում է ս. խոսքարդում Իրաքի Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Տան մեջ՝ «Մայր Աթոռի գանձերը» թեմայի շուրջ: Իսկ հաջորդ օրը, ապրիլի 9-ին, չորեքշաբթի օրը, սրբազանը դասախոսում է Բաղդադի Հ.Ե.Ե. Միու-

Մի պահ Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կատարված արարողությունից
(Ապրիլ 6, Ջատիկ)

ման, և Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը նրա ուսերի վրա է գցում մանուշակագույն ծաղկյա փիլոնը և հուզիչ խոսքերով շնորհավորում առաջնորդ հոր եկեղեցականներ և հանրօգուտ համեստ ծառայությունները:

Ժողովրդի հոգևոր ուրախությունը բազմապատկվում է, երբ սրբազանը հաղորդում է, որ նույն օրն իսկ ստացվել է Տ. Ավագ վարդապետի առաջնորդական պաշտոնը հաստատող հանրապետական հրովարտակը:

Հավարտ ս. պատարագի սրբազանն առաջնորդվում է առաջնորդարանի դահլիճ՝ ընդունելու զատկական շնորհավորություններ:

Ապրիլի 8-ին, երեքշաբթի օրը, Տ. Հուսիկ սրբազանը հետաքրքիր դասախոսություն է կարդում Իրաքի Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Տան մեջ՝ «Մայր Աթոռի գանձերը» թեմայի շուրջ: Իսկ հաջորդ օրը, ապրիլի 9-ին, չորեքշաբթի օրը, սրբազանը դասախոսում է Բաղդադի Հ.Ե.Ե. Միության սրահում՝ «Հայաստանի պատմական վանքերը» թեմայի շուրջ:

Դասախոսություններից հետո տրվում են ճաշկերույթներ՝ ի պատիվ Մայր Աթոռի ներկայացուցչի:

Ապրիլի 10-ին, հինգշաբթի օրը, Հուսիկ սրբազանը, ընկերակցությամբ առաջնորդ վարդապետի և Ազգային Կեդրոնական Վարչության անդամ տիար Հայկ Բոստանյանի, պաշտոնական այցելություն է տալիս Իրաքի Կալվածոց և Կրոնական գործերի մինիստրության ընդհանուր տնօրեն տիար Աբբաս Աբդ-Էլ Էմիրին և շնորհակալություն հայտնում Իր՝ Իրաք այցելության առթիվ ցուցաբերված բարյացակամության համար: Սրբազանը միաժամանակ բարեմաղթություններ է կատարում Իրաքի արաբ

ազնիվ ժողովրդի բարօրության և կառավարության հայրենանվեր աշխատանքների հաջողության համար:

Այս այցելության առիթով պրն. Աբբաս Աբդ-Էլ Էմիրը պաշտոնապես առաջնորդ Ավագ վարդապետին է հանձնում առաջնորդական ընտրության հանրապետական հրովարտակը:

Նույն օրը, երեկոյան, Իրաքի հայոց առաջնորդը և Ազգային Կեդրոնական Վարչությունը, ի պատիվ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի, ընդունելություն է կազմակերպում՝ նրա ծննդյան 60-ամյակի առթիվ: Ընդունելության ժամանակ սրբազանի ծննդյան հոբելյանը շնորհավորում և բարեմաղթություններ են կատարում ներկաներից ոմանք:

Այս առթիվ առաջնորդ վարդապետը հայտնում է, որ իր միջնորդությամբ Հայոց Հայրապետը բարեհաճել է Բաղդադում եկեղեցական-ազգային կյանքում ավելի քան 30 տարիներ հանրօգուտ ծառայություն մատուցած տիկին Աննա Զոպանյանին և տիկին Էոժեն Ստեփանյանին արժանացնել «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի, իսկ Բաղդադի «Կոմիտաս» երգչախմբի բազմավաստակ ղեկավար պրն. Կարապետ Քիշմիշյանին պարգևատրել է «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով:

Այնուհետև Տ. Ավագ վարդապետը հրապարակավ ընթերցում է հայրապետական կոնդակները, որոնք տպագրվել են «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 14, 15, 16):

Հայրապետական կոնդակներն ունկնդրվում են հոտնկայս, երկյուղածությամբ և երախտագիտությամբ: Բոլոր ներկաների ծափողջույնների ներքո Տ. Հուսիկ սրբազանը հրապարակավ հանձնում է շքանշանները ու կոնդակները:

Օգտվելով առիթից Տ. Հուսիկ սրբազանը ջերմ շնորհակալություն է հայտնում նաև առաջնորդ Տ. Ավագ վարդապետին, Իրաքի Ազգային Կեդրոնական վարչությանն ու ողջ հայ համայնքին՝ իր հանդեպ ցույց տրված ջերմ հյուրասիրության և հարգանքի համար, որպես համեստ միաբան Մայր Աթոռի:

Ընդունելության ժամանակ խոսք է առնում նաև Ազգային Կեդրոնական Վարչության նախագահ դոկտ. Հասրաթ Միքայելյանը և ընդհանուր խանդավառության մեջ հայտնում ի լուր ժողովրդյան, որ երախտագիտությամբ ստացվել է առաջնորդական ընտրության վավերացման հանրապետական հրովարտակը: Բոլորը հոտնկայս սրտագին ծափահարություններով իրենց երախտագիտությունն են հայտնում Իրաքի բարեխնամ կառավարությանը և Իրաքի հանրապետության նախագահ Նորին Վսեմություն Սատտամ Հյուսեինին՝ Իրաքի հայ համայնքի հանդեպ ցույց տրված կառավարական բարձր ուշադրության համար:

Այնուհետև, այս բոլորից հետո, Տ. Ավագ վրդ. Ասատուրյանը ներկաներին ծանոթացնում է Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի կենսագրությանը և Մայր Աթոռում նրա ծառայություններին:

Այս առթիվ Բաղդադի հայ համայնքի կողմից սրբազանին, որպես հիշատակ, նվիրվում է ոսկյա գեղեցիկ մի մատանի:

Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը լավագույն տպավորություններով և հիշատակներով ապրիլի 16-ին վերադառնում է Մայր Աթոռ:



ՄԻ ՔԱՆԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՅՈՒՆՈՏ ՕՐԵՐԻՑ

Հայկական մեծ եղեռնի վերաբերյալ բազմաթիվ վավերագրեր են հրատարակված ինչպես առանձին ժողովածուներում, այնպես և պարբերական մամուլում: Սակայն կա Եղեռնի մասին վավերագրերի մի խումբ, որը վրիպել է աղբյուրագետ ուսումնասիրողների ուշադրությունից: Դրանք Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնական տեղեկագրություններ են, որոնք ուղարկվել են Մայր Աթոռ: Ցանկանալով այդ վավերագրերը գիտական շրջանառության մեջ դնել, անհրաժեշտ ենք համարում նրանք հանձնել հրատարակության:

Տեղեկագրերը, ինչպես երևում է, գրված են Պոլսի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի կողմից, սակայն նա, ըստ երևույթին, վախենալով, որ վավերագրերը ճանապարհին կարող են ընկնել թուրքական իշխանությունների ձեռքը, խուսափել է իր ստորագրությունը դնել տեղեկագրերի տակ: Հնարավոր չի եղել ուղիղ գծով տեղեկագրերը հասցնել Էջմիածին, ուստի նրանք ուղարկվել են Բուլղարիայի հոգևոր առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանին, որ և հասցրել է Մայր Աթոռ:

Տեղեկագրերը սոսկալի ծանր տպավորություններ են թողնում ընթերցողի վրա: Այնտեղ բերվում են արևմտահայությանը ոչնչացնելու սահմռկեցուցիչ տեղեկություններ՝ կոտորած, բռնի գաղթեցում, բռնաբարություն, հավատուրացություն, կողոպուտ... անկարելի է մատնացույց անել մարդկային պատմության նույնիսկ բարբարոսության շրջանում նման սոսկալի նախճիրներ:

Վավերագրերը հրատարակում ենք **«Գործք և գրագրություն դիվանատան Վեհափառ կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գեորգ Ե Բուլղարահայոց թեմի մասին»** թղթապանակից: Հրատարակվող վավերագրերի խմբից դուրս է մնացել միայն մի վավերագիր, որը հրատարակվել է Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի կողմից («Պատմա-բանասիրական հանդես», 1965 թ., № 1, էջ 88—90):

ՊՐՈՖ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

1. Բուլղարիայի հայոց հոգևոր առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի զեկուցագիրը Գեորգ Ե կաթողիկոսին:

№ 236:

Առ Նորին Վեհություն Տ. Տ. Գեորգ Ե Սրբազնակատար կաթողիկու և Ծայրագույն Պատրիարք համազգային Արարատյան Մայր Աթոռ ի Ս. Էջմիածին:

Վեհափառ սրբազան Հայրապետ.

Թուրք կառավարության հայաջինջ և մահասփյուռ քաղաքականության հետևանոք ի Պոլիս և ի գավառս մերազնեից կրած

աննախընթաց և ցավագին տառապանքներուն և տեղի ունեցած ավերումներուն մանրամասնությունները Կոստանդնուպոլսեն ամենաստույգ աղբյուրե գաղտնի միջոցավ ստացած ըլլալով, հատկապես խրնդրված է մեզմե հաղորդել բառ առ բառ Ձերդ Վեհափառության սույն մանրամասնությունները և հայցել օժանդակություն և դարման առաջքն առնելու համար սույն հայահալած համատարած մեծ վտանգին:

«Թուրքիո հայությունը տարիներե ի վեր չտեսնված տագնապ կանցնե այժմ. համիդական շրջանին ստվեր բերող շրջանի մը մեջ կգտնվինք՝ բանտարկությունք, կողոպուտք, գյուղերու ավերում, սպանությունք հայաբնակ բոլոր գավառներուն մեջ և ընդհանուր կոտորածներու փոխարեն ընդհանուր տարագրումներ:

Ապրիլի սկիզբը Վանա դեպքը տեղի ունեցավ, որ առիթ տվավ կառավարության քաղաքին հայ թաղերը ոմբակոծելով՝ 300 տունի չափ մոխիր դարձնելու և 5—600 մարդ սպանելու... Այս դեպքերուն մանրամասնությունները ծանոթ չէ մեզի, սակայն ապրիլի 10-են ետքը կառավարության քաղաքականության փոփոխումին և հայոց հանդեպ ի գործ դրած խստությանց պատճառը Վանա մեջ հայոց այդպիսի ընթացք ունենալն է, պատասխանեցավ նախարարներեն: Այդ թվականին կենտրոնեն տրված հրամանի մը վրա թուրքիո ամեն կողմը խուզարկվեցան բազմաթիվ հայոց տուներ, չխնայելով նույնիսկ առաջնորդարան, եկեղեցի ու վարժարան: Հազարավոր անձեր ձերբակալվեցան՝ զենք, վնասակար գիրք, պատկեր և այլն ունենալու պատճառով: Ասկե զատ, առանց որոշ հանցանքի գրեթե ամեն քաղաքե և գյուղե իսլամաբնակ վայրեր աքսորվեցան հազարավոր երևելի հայեր, եկեղեցականներ, մտավորականներ, հարուստներ և կուսակցականներ կամ անոնց հետ շփում ունեցող անհատներ: Պոլսեն 250-են ավելի անձեր աքսորվեցան Զանղրի (Գասթեմոնի նահանգ) և Այաշ (Գաղատիա), բայց գավառներուն աքսորականները ավելի շատ են թվով՝ Պոլսո հետ բաղդատելով: Ասիկա որոշ ծրագրի մը արդյունք է, հայությունը նախ զինաթափ ընել և գլխավորներն աքսորելով ահաբեկել, ապա ազգը ամբողջովին փչացնել: 20—45 տարեկաններն արդեն զենքի տակ են, մյուսներն այս կերպով չեզոքացնելե հետո, մնացած կիներուն և փոքրիկներուն գլխուն եղերգություն մը խաղալ: Այս եղերգությունը կամ դժոխային ծրագիրը հետևյալն է: Հայկական խնդիրը միանգամայն ընդմիշտ վերջացնելու համար հայաբնակ վեց նահանգներուն հայությունը մեծ մասամբ դեպի հարավ փոխադրել, Միջագետքի այն մասը, որ կգտնվի Հալեպի և Մուսուլի միջև և ուր կբնակին այժմ արաբ և քուրդ աշերաթներ: Այս ծրագիրը գործադրելու պաշտոն ունեցող հանձնաժողովն արդեն ընտրված և ճամբա ելած է և կըկարծենք թե եթե ժողովրդին տեղափոխումը չէ սկսած տակավին, շատ քիչ օրեն պիտի սկսի, թեև կկարծենք թե Վանա ոչ գրավյալ տեղերուն և Բաղեշի հայ բնակչությունը սկսած են արդեն ճամբա հանել: Այլ ևս երևակայեցեք թե ի՞նչ պիտի ըլլա անոնց վիճակը, քանի որ ո՛չ միայն իրենց կալվածները պիտի ձգեն, այլ և իրենց ցանքերը և բոլոր գույքերը: Անշուշտ, քանի մը ամսվան մեջ պիտի կոտորվին անոթության և անընտել կլիմայի երեսեն: Օրինակն մեր աչքի առջևն է արդեն: Զեյթուն և շրջակայից հայությունը, ինչպես անշուշտ իմացած եք, այժմ ամբողջովին տեղափոխված է մեկ մասը Հալեպեն անդին Զոր գավառը և մյուս մասը (իբր 1000 ընտանիք)՝ Գոնիայի Սուլթանիե գյուղաքաղաքը, ուր կմնան այսօր մերկ, անոթի և անապատան: Տեղը ճախճախուտ ըլլալով, համաճարակ հիվանդությունք արդեն սկսած են կոտորածներ ընել անոնց մեջ: Ասոնց հետ հարաբերության մտնելու կամ անոնց օգնություն հասցնելու համար մեր ըրած բոլոր դիմումները անլսելի կմնան ցարդ, իսկ ասոնց գյուղերն ու կալվածներն արդեն սկսած են հանձնվել իսլամներու հատուկ հանձնաժողովի մը ձեռամբ»:

Ահա Վեհափառ Տեր, մեզ հասած գրության կարևոր մասին ամբողջությունը, խորհեցեք թե այս հայաջինջ քաղաքականությունը ո՛րքան ծանր պիտի կշռե մեզի և ո՛րչափ պիտի վտանգե մեր ազգին գոյությունը: Ձերդ Վեհափառության տարած ջանքերը համայն ազգիս Հայոցս ծանոթ են, միշտ երախտագիտությամբ կհիշատակենք: Գիտենք թե ինչ տքնաջան աշխատությամբ նվիրված եք հարկ եղած տեղերը դիմելու և ազգը փչացումե ազատելու համար: Պոլսո մեջ պատրիարքարանի բոլոր միջոցները սպառած են, անոր դիմումները անլսելի կմնան: Մայրաքաղաքի դեսպաններեն միայն ամերիկական և պուլկարական դեսպաններն են, որ հայերով կզբաղին, սակայն կարծես չեն բավեր վտանգը հեռացնելու ցորչափ թուրք կառավարությունը վարողներուն վրա ճնշիչ միջոց մը չգործադրվի:

Սույն ստույգ աղբյուրե ստացված տեղեկությունք Նորին վսեմություն Պողոս Նուբար փաշայի ևս այսօրվան թղտատարով հաղորդված ըլլալով մեր կողմե ի գիտու-

թյուն Ձերդ Վեհափառության այս պարագան կտեղեկացնենք:

Մաղթելով խորին ակնածանոք ի համբույր Աստվածամերձ Սրբո Աջույդ պատվականի:

Մնամ ամենախոնարհ հոգևոր որդիդ և անձնվեր Ձերդ Վեհափառության

Ընտրյալ առաջնորդ Պոլկարահայոց
Ղևոնդ եպիսկոպոս Դուրյան
(էջ 26—30):

2. Բուլղարիայի հոգևոր առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի զեկուցագիրը Գեորգ Ե կաթողիկոսին:

№ 250: 22 հուլիսի 1915
Ֆիլիպե

Առ Նորին Վեհափառություն Տ. Տ. Գեորգ Ե Սրբազնակատար կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք համազգական Արարատյան Մայր աթոռոո ի Ս. Էջմիածին:

Վեհափառ Սրբազան Հայրապետ,

Կհաստատեմ մեր հղած անցյալ ամսո 11 թվականին և 236 թվահամար գրությունն: Այս անգամ ևս Պոլսեն մահասարսուռ տեղեկություններ ստացած ըլլալով ի մասին մեր ազգեից կրած անլուր և աննախընթաց տառապանքներուն և թուրք կառավարության դժոխային ծրագրերու գործադրության: Ներփակ հարկ համարեցաք հղել Ձերդ Վեհափառության ստացած նամակին իսկական պատճենը, խնդրելով, որ հաճիք ծանուցանել տալ մեզ սույն և նախընթաց մեր հղած նամակներուն ստացած ըլլալը:

Կմնանք անձնվեր Ձերդ Վեհափառության և տառապյալ ազգիս
Ղևոնդ եպիսկոպոս Դուրյան:
(էջ 31—32)

3. Բուլղարիայի հոգևոր առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի Պոլսից ստացած զեկուցագիրը:

№ 295 Կ. Պոլիս 30/13 հուլ. 1915

Գերապատիվ Տ. Ղևոնդ ս[րբազան]
եպիսկ. Դուրյան
Ֆիլիպե

Մայիսի 25-են ի վեր դեպքերը գահավիժորեն իրար հաջորդեցին և ազգին վիճակը իր դառնագույն և թշվառագույն աստիճանին հասավ: Մինչ այն օրը Կիլիկիո քանի մը քաղաքներու և գյուղերու ժողովրդյան բռնի տարագրումը գիտեին, իսկ Կարնո մասին շշուկներ միայն հասած էին մեզի, այսօր ստուգապես գիտենք, թե Կիլիկիո բոլոր քաղաքներու և գյուղերու հայ ժողովուրդը ամբողջովին արդեն տեղահան եղած է և Հալեպի հարավային ճանապարհները քշված: Կարնո ժողովուրդը մայիսի մեկեն ի վեր և ապա ամբողջ նահանգը, և հետզհետե ճամբա հանված են Սամսոնեն ու Կեսարիայեն սկսյալ մինչև Տիգրանակերտ և Եդեսիա՝ մեջ ըլլալով Տրապիզոնի, Սեբաստիո, Խարբերդի, Բաղեշի, Վանա և Տիգրանակերտի ամբողջ հայությունը, մեծեն մինչև պզտիկ, առանց մեկ մարդ իսկ թողլու և քշված դեպի Միջագետաց անապատները, Հալեպի հարավային կողմերեն մինչև Մուսուլ և Պաղտատ: «Հայաստան առանց հայի»—այս է Օսմանյան կառավարության ծրագիրը: Եվ արդեն սկսած է հայոց հողերուն և տուներուն մեջ իսլամներ բնակեցնել: Հարկ չկա ըսելու, որ տարագրվողները, գրեթե ոչ մեկ բան կրնան առնել իրենց հետ՝ կառավարության կողմե թույլ չտրվելուն պատճառավ, և արդեն փոխադրության միջոց ալ չէ մնացեր այդ գավառներուն մեջ, քանի որ զինվորական իշխանությունը ամբողջովին գրաված է զանոնք: Հայ գաղթականները պարտավոր են մեկեն երկու ամիս և ավելի հետիոտն ճամբորդել հասնելու համար անապատի այն անկյունը, որ որոշված է անոնց գերեզմանն ըլլալու: Արդեն լուրեր կհասնեն թե ճամբուն երկայնքն և Եփրատի ջուրերը լեցուն են դիակներով այն թշվառ գաղթականներուն, որոնց մնացորդներն ալ անապատներու մեջ հետզհետե մեռնելու դատապարտված են՝ ո՛չ բնակարան, ո՛չ աշխատության միջոց և ո՛չ ապրուստ ունենալուն պատճառավ: Հայությունը ամբողջովին բնաջինջ ընելու ծրագիր մըն է այս, առանց աղմուկի, առանց կոտորած անունը տալու, աճռելի նախճիր մըն է այս: Պետք է գիտնալ, թե 20—45 տարեկանները զենքի տակ առնելե հետո 15—20 և 45—60 տարեկան արուներն ալ զինվորական պետքերու փոխադրության համար վար դրված են, պետել տվողներն զանազան տեղեր աքսորված կամ այլևայլ պատճառներով բանտարկված են, հետևաբար հայ գաղթականները կճամբորդեն միայն ծեր, կին և մանուկ ունենալով, և այնպիսի տեղերե պիտի անցնին, որ խաղաղության ժամանակ անգամ առանց կողոպտվելու կամ սպանվելու կարելի չէր անցնել: Թուրք չեթեները և այլ ավազակները, ու նույնիսկ ժանդարմները ու կառավարության պաշտոնյաները զանոնք կողոպտելու, կիներն ու աղջիկները բռնաբարելու և առևանգելու համար ազատորեն կգործեն: Զանազան տեղերե իսլամացումներու լուրեր ալ կհաս-

նին մեզի, կերևի թե ժողովուրդը իր կյանքը փրկելու տարբեր միջոց չունի:

Պատերազմական ատյանները անխնա կգործեն ամենուրեք: Պոլսո մեջ 20 հնչակյաններու կախաղան հանվիլը իմացաք անշուշտ լրագրներեն: Անոնց համար տրված վճիռը տերության ոչ մի օրենքին կհամաձայներ: Նույն օրը Կեսարիո մեջ ալ 12 հոգի կախաղան հանված են՝ Պուքրեշին մեջ հնչակյան և դաշնակցական կուսակցությանց ըրած գաղտնի ժողովին հրահանգներուն հնազանդ ըլլալուն համար: Կախվողներեն զատ 32 հոգի ևս 10—15 տարվո թիապարտության դատապարտված են, մեծ մասամբ ոչ կուսակցական պարկեշտ վառականներ: Կիլիկիո կողմերն ալ 12 հոգի կախված են: Դատապարտություններն ամենօրյա են, զենք, գիրք, պատկեր և այլն քանի մը տարվան բանտարկության բավականաչափ փաստ կհամարվեն: Ծեծի տակ սպանությունները շատ են, Տիգրանակերտ՝ 13 հոգի, Կեսարիա՝ 6 և այլն: Իսկ կան որ և ոչ իսկ պատերազմական ատյաններուն կհանձնվին՝ ճամբան սպանվելով: Այսպես, Շապին Գարահիսարեն Սեբաստիա փոխադրվող 13 հոգի, Սու Շեհիրքեն Սեբաստիա փոխադրվող Բյուրք գյուղի քահանաներ 5 ընկերներով, նույնիսկ ձեռքերնին կապած վիճակին մեջ և այլն: Ալ չեմ հիշեր ուրիշ տանջանքներ, որոնք ի գործ դրված են ամենուրեք՝ զենք և կուսակցական փնտռելու համար: Ո՛չ մեկ տուն մնացած է առանց խուզարկության. ո՛չ առաջնորդարան, ո՛չ եկեղեցի և ո՛չ վարժարան: Հարյուրավոր կիներ, աղջիկներ և մանուկներ անգամ բանտերու մեջ կհեծեն այսօր: Եկեղեցիներ ու վանքեր կողոպտված, քանդված և սրբապղծված են: Առաջնորդներուն անգամ չի խնայվիր. Պրուսայի առաջնորդ՝ Պարգև վարդապետ Դանիելյան, Տրապիզոնի առաջորդ՝ Գևորգ վարդապետ Թուրյան, Կեսարիո առաջնորդ՝ Խոսրով եպիսկոպոս Պեհրիկյան, Շ. Գ. Հիսարի՝ Վաղենակ վարդապետ Թորիկյան, Զարսանճակի՝ Գեորգ վարդապետ Նալպանտյան և այլն բանտարկված և պատերազմական ատյաններու հանձնված են: Տիգրանակերտի տեղապահ Մկրտիչ վարդապետ բանտի մեջ ծեծի տակ հոգին ավանդած է: Մյուս առաջնորդներեն ևս լուր չկա, հավանաբար մեծագույն մասը բանտարկված է: Ամբողջ հայությունը Թուրքիո մեջ այժմ բերդարգել եղած է, թղթակցություն և հեռագրական հաղորդակցություն բոլորովին դադրած է:

Վանա և Բաղեշի շրջակա հայ գյուղերը ջարդված և կողոպտված են: Շապին Գարա Հիսար ամսույս սկիզբը անխնայորեն ջարդված է, հազիվ քանի մը մանուկ մնացած է, կըսվի: Դժբախտաբար, մանրամասնությունք շատ ուշ կամ դժվար կհասնի մեզի:

Կտեսնիք թե Թուրքիո հայությունը իր կյանքին վերջին օրերը կապրի, մահը ուշացնելու որևէ միջոց չէ մնացած մեզի, արտասահմանի հայությունն ալ եթե անկարող ըլլա չեզոք պետությանց գութը շարժելու, քանի մը ամսեն հետո մեկ ու կես միլիոն հայութենեն շատ քիչ պիտի մնա, փչացումն անխուսափելի է...

Ստորագրություն
(էջ 33—36):

4. Բուլղարիայի առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի զեկուցագիրը Գեորգ Ե կաթողիկոսին:

№ 295 Ֆիլիպպե 12 օգոստոս 1915

Առ Նորին Վեհափառություն Տ. Տ. Գեորգ Ե Սրբազնակատար կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռո ի Ս. Էջմիածին

Վեհափառ Ս. Հայրապետ.

Կհավաստենք մեր հղած անցյալ ամսվա 9 թվակիր և 250 թվահամար գրությունն և ներփակյալ տեղեկագիրն:

Մեր այս երրորդ տեղեկագրով ամենադժբախտ պարտականությունն է, որ կընտանեմք հաղորդելու Ձերդ Վեհափառության Հայաստանի կործանումը. այլ ևս ոչ մեկ հայ չէ մնացած Հայաստանի որևէ մեկ անկյունը: Ամեն կողմ ավերված, քանդված և կործանված է: Ներփակյալ պոլսական աղբյուրե մեր ստացած գրության պատճեն արցունքով Ձերդ Վեհափառության կհղեմ: Ամենեն քար սիրտն անգամ չի կրնար տոկալ ի տես թուրքական վայրագության. պատմությունը երբեք արձանագրած չէ այսպիսի գազանություններ:

Որպեսզի կարենաք Ձերդ Վեհափառության պատկերացնել մեր ամբողջական կորուստը, աստ կդնեմք զանգվածային տեղահանության հետևանոք Հայաստանի, ինչպես և Փոքր Ասիո այլևայլ գավառներու մեջ սպանվածներու, անհետացողներու, իսլամացածներու, առևանգվածներու թիվը:

Հալեպ	—15,800	հոգի
Սիս	— 9,500	»
Հաճըն	—20,800	»
Զեյթուն	—21,000	»
Ֆոնուզ	— 7,000	»
Տեվրիկ	—11,300	»

Բաղեշ-Մուշ—51,500 հոգի
Նիկոմիդիա—65,000 »
Արմաշ— 5,000 »
Պրուսա—25,000 »
Պանդրմա—15,000 »
Կեսարիա—40,000 »
Սեբաստիա—81,500 »
Եվդոկիա—23,000 »
Ամասիա—25,000 »
Շ. Գ. Հիսար—25,200 »
Սամսոն—20,000 »
Տրապիզոն—32,700 »
Էրզրում—75,000 »
Երզնկա—25,500 »
Բաբերդ—17,000 »
Բասեն—10,500 »
Դերջան—15,000 »
Քեմախ—10,000 »
Խարբերդ—45,000 »
Քղի —24,000 »
Սղերդ —25,000 »
Տիգրանակերտ—55,100 »
Ակն —10,200 »
Արաբկիր—19,500 »
Չմշկածագ—9,000 »

Համագումար 835,600

Այս համատարած կորստյան թիվը աճուելի և սոսկալի թիվ մըն է: Արտասահմանի հայությունը բոլորովին շվարած այս կորստյան հանդեպ, ամեն միջոցներու կը դիմե իր դժբախտ հայրենակիցներուն օգնություն հասնելու համար: Այսօրվա թվականով իսկ Բուլգար արքայական կառավարության մատուցինք հիշատակագիր մը և նկարագրեցինք զանգվածային տեղահանության, կոտորածներու, առևանգումներու, սովամահներու և կրոնափոխության մանրամասնությունները՝ խնդրելով, որ իր ազատարար ձեռքը երկարե փրկելու համար գեթ Պոլսո մեկ քանի գավառներու մեջ մնացած հայության բեկորները:

Շնորհապարտ պիտի ըլլայինք Վեհափառ տեր, եթե եվրոպական պետությանց մոտ Ձեր Վեհափառության դիմումներուն արդյունքը բարեհաճություն ունենայինք հաղորդել տալ մեզ ի մխիթարություն արտասահմանի հայոց:

Մատչելով ի համբույր աստվածարյալ սրբո աջույդ պատվականի մնամ ամենախոնարհ հոգևոր որդի Ձեր, ընտրյալ առաջնորդ Պուլկարահայոց

Ղևոնդ եպիսկոպոս Դուրյան

(էջ 37—38)

5. Բուլղարիայի հայոց առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանին զեկուցագիրը Կ. Պոլսից ուղարկած տեղեկագրությունը:

2/15 օգոստոսի 1915
Գերապատիվ Տ. Ղևոնդ եպիսկոպոս
Դուրյան
Առաջնորդ Պուլկարիո Հայոց
ի Ֆիլիպե:

Վերջին նամակես ետքը, զոր ստացած ըլլալնիդ իմացուցած եք, հետզհետե ներքին գավառներեն ավելի ստույգ տեղեկություններ սկսան հասնիլ: Մեր այս նամակիս մեջ տրված տեղեկությունները քաղված են Բաբերթեն իսլամանալով ազատած և պատահաբար Պոլիս եկած կնոջե մը, թուրք սպայի մը կողմե հափշտակվելով Պոլիս բերված 9—10 տարեկան Զիլեցի աղջիկ մը, Խարբերդեն եկած իսլամ ճանապարհորդե մը, Երզնկայեն եկած օտար ճամբորդներե և այլն: Հետևաբար մեր այս տեղեկությունները մեզ պատմված են նույն իսկ ականատեսներե և խժդժությանց ենթակա եղողներե:

Այսօր այլևս ստուգված է, որ Կարնո, Տրապիզոնի, Սեբաստիո, Խարբերդի, Բաղեշի և Տիգրանակերտի նահանգներուն մեջ հայ չէ մնացած բնավ. այդ միլիոնի մը չափ ժողովուրդը իրեն հայրենիքեն հանկարծական տեղահան եղած և դեպի հարավ քշված է: Տեղահանությունը շատ սիստեմաթիք կերպով կատարած են տեղական իշխանությունք ապրիլի սկզբեն սկսյալ: Նախ ամեն տեղ՝ գյուղ և քաղաք ամենազարհուրելի տանջանքներով և բազմաթիվ սպանություններով զինաթափ եղած է ժողովուրդը՝ ժանդարմներու և այս իսկ նպատակով բանտերե արձակված ոճրագործներե կազմված չեթեներու ձեռամբ: Զենք, գիրք, կուսակցական անուն և այլ զանազան պատրվակներ, և անոնց բացակայությանը: Հարուստներ և աչքի զարնող հայ երևելիներ մեծ խմբերով բանդերը լցված են: Այնուհետև սկսված է տեղահանությունը: Նախ բանդարկութենե ազատ մնացած այրերը, մեծավ մասամբ և բանդարկյալներեն անոնք, որոնց վրա հանցանք մը չէ գտնված, զանազան տեղեր աքսորելու պատրվակավ, խումբ խումբ ճամբա հանված և ամբողջովին կոտորված են առանց մեկ հոգի իսկ ազատելու: Ասոնք ճամբա հանելեն առաջ տեղական կառավարությունը պաշտոնապես խուզարկեր է զանոնք և վրանին գտնված դրամ և արժեքավոր առարկաները վար դրած է: Շատ տեղեր ասոնք ձեռքերնին կապած կամ 5—10 հոգի իրարու կապ-

ված, ղրկված են: Մնացյալ ժողովուրդեն կին, ծեր և մանուկ Խարբերթի վիլայեթին մեջ պարզապես իբրև անտեր ապրանք նկատած, իսլամ ժողովրդի քմահաճույքին ենթարկված են: Ամենաբարձր պաշտոնյաներե սկսյալ, մինչև հասարակ գյուղացին, իրեն հավնած կինը կամ աղջիկը իրեն կնության առած է բռնի իսլամացնելով: Պզտիկ մանուկները ուզողը առած է ուզածին չափ և մնացյալները ճամբա հանած են հետիոտն և անոթի, առանց պաշարի՝ գտնված չեթեներու սուրին կեր ըլլալու կամ անոթութենե մեռնելու համար: Տիարպեքիրի վիլայեթին մեջ ջարտ տեղի ունեցած է: Մերտին գլխավորաբար, և ժողովուրդը դարձյալ նույն խժդժությանց ենթակա եղած է: Կարնո, Բաղեշի, Սեբաստիո և Տրապիզոնի նահանգներու ժողովուրդը տեղահան եղած ժամանակ, կառավարության կողմը բավական դյուրություն տրված է իրենց. 5—10 օր պայմանաժամ, մասամբ գույք ծախելու թույլտվություն և ճամբա հանված ատեն քանի մը ընտանիքի սայլ մը տրամադրած են, որ մեկ երկու օրեն զիրենք ճամբուն մեջտեղը լքելով ետ կդառնան: Ճամբա ելնող կարավանները երբեմն հաջորդ օրը և երբեմն քանի մը օր ետքը ճամբուն վրա կհանդիպեն չեթեներու և իսլամ գյուղացիներու, որոնք զիրենք ամբողջովին կկողոպտեն: Չեթեները, ժանդարմներու հետ միացած, կսպաննեն անոնց մեջ եղող քանի մը այրերը և պատանիները: Երիտասարդ կիները և չափահաս աղջիկները կհեռացուցվին կարավաններեն, մանուկները կհափշտակվին անոնց կողմե և կմնան միայն քանի մը պառավ կիներ, որոնք ժանդարմներու կողմե մըտրակվելով առաջ կերթան ճամբուն վրա անոթութենե հետզհետե մեռնելու համար: Ականատես մը մեզ կպատմե՝ թե Կարնո վիլայեթեն Խարբերթի դաշտը հասած կիներու կարավանը հոն դաշտի մեջ ձգված է քանի մը օրեր, ուր անոթութենե մեռած են հետզհետե ոմանքն ալ (օրական 50—60 հոգի) և կառավարությունը միմիայն քանի մը հոգի ղրկած է անոնց դիակները թաղելու, որպեսզի իսլամ տարրին առողջությունը չխանգարվի:

Զիլցի փոքրիկ աղջնակը մեզ կպատմե՝ թե երբ Մարսվանի, Ամասիո և Թոքատի ժողովուրդը դեպի առաջ կերթային, Սարը Գոշլա ըսված տեղը Սեբաստիո և Կեսարիո մեջտեղը, կառավարության դրան առջև իսկ, բոլոր աղջիկ և մանչ մանուկները առնվեցան մայրերու ձեռքեն և սենյակներու մեջ լեցվեցան և կարավանը ստիպեցին, որ առաջ երթա: Իսկ մանուկներուն համար հայտարարություն եղավ շրջակա գյուղերու, որպեսզի ամեն ոք գար և ուզածը ընտրեր և առներ: Իսկ ինքն ու իր մեկ ընկերուհին (ամասիաց Նվարդ) սպանի մը կողմե բերված են Պոլիս: Կիներու և մանուկներու կարավանները ամեն քաղաք կամ ավան հասնելուն կառավարության շենքին առջև կցուցադրվեն, որպեսզի իսլամները իրենց ընտրությունները կատարեն:

Բաբերտեն ճամբա ելածները այսպես կոտորակվելեն վերջը, մնացյալ մանուկները և կիները ձգվեցան Երզնկայի առջև Եփրատ գետը՝ Քեմախ Պուլաղի ըսված տեղը, ու այս ուրիշ բարբարոսություններեն վշտահար Երզնկայի մեջ գտնվող գերման կարմիր խաչի հիվանդանոցին հիվանդապահուհիներեն նորվեկիացի ազնվական ընտանիքներեն օրիորդ Flora of Wedel Jarlesberg և իր մեկ գերման ընկերուհին իրենց պաշտոնեն հրաժարեցան, Պոլիս եկան և անձամբ մեկ քանի դեսպանատուներ պտտելով պատմեցին այս վայրագ արարքները:

Այս բարբարոսությունները ի գործ տըրված են ամեն կողմ, և այսօր այդ նահանգներուն բոլոր ճամբաներուն վրա հազարավոր հայերուն դիակներուն է, որ կհանդիպին ճամբորդները: Իսլամ ճամբորդը Մալաթիայեն դեպի Սեբաստիա եկած ատեն ամբողջ 9 ժամ խիստ դիակներու հանդիպած է՝ այր թե կին: Մալաթիո բոլոր այր մարդերը հոս բերված և սպաննված են, իսկ կիներն ու մանուկներն ամբողջովին իսլամացուցված են: Ոչ ոք այժմ կրնա ճամբորդել այդ կողմերը. երբ այր մարդ է ինքը՝ ամեն իսլամ և մանավանդ չեթե կամ ժանդարմ, պարտականություն կհամարի իրեն անմիջապես զայն սպաննել: Վերջին Տիգրանակերտի պատերազմական ատյանին առջև դատելու համար ղրկված օսմանյան երեսփոխաններեն Զոհրաբ և Վարդգես ալ ճամբուն վրա սպաննվեցան Հալեպեն անդին: Այդ նահանգներուն մեջ այժմ իսլամի մը անունին տակ ծպտվելով կարելի է ճամբորդել, իսկ կիներու մասին արդեն վերը ըսվեցավ: Ու երբ կյանքի հետ այդ կերպով կվերաբերին, բարոյականի մասին խոսելը ավելորդ կդատինք:

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ОРГАН ЭЧМИАДЗИНСКОГО ПЕРВОПРЕСТОЛА
(АПРЕЛЬ 1980 ГОД)

Апрельский номер журнала открывается проповедью Его Святейшества, произнесенной 6-го апреля в кафедральном соборе, в праздник Воскресения Спасителя 3

РЕДАКЦИОННАЯ—Армянский народ и церковь

Указанная статья посвящена апостольской миссии Первопрестола и армянской церкви в жизни своего народа. Редакционная, одновременно, является ответом на те издания, где некоторыми армянскими духовными служителями-католиками писалось против Первопрестола и Армянской церкви . . . 6

Энциклики Его Святейшества о награждении орденами Первой Степени «Св. Григория Просветителя», «Свв. Саака и Месропа» и «Св. Нерсеса Благодатного» мирян, имеющих большие заслуги в области церковного служения . . 10

Приветствия св. Воскресения направленные Его Святейшеством главам сестер-церквей. Полученные ответы 19

Послания к празднику св. Воскресения к трем армянским историческим Престолам, епархиальным начальникам и церковным общинам 22

Обмен телеграмм между Его Святейшеством и Генеральным секретарем ВСЦ доктором Филиппом Потером по случаю 65-летия Апрельского геноцида . 24

Энциклика блаженного Католикоса Геворга Пятого о создании 28 декабря 1914 года специальной комиссии по оказанию помощи беженцам, покидавших Западную Армению и приютившихся в стенах св. Эчмиадзина .

В 1914 году, в Восточных районах Западной Армении уже были заметны первые ужасы. В 1915-ом массовое переселение уже принимало большие размеры. В результате этого началось массовое бегство в Восточную Армению. Ужасы зимы 1914-го являлись началом Геноцида 1915-го 25

Официальный визит Его Святейшества к Католикосу Патриарху Всея Грузии Илия Второму

С 11 по 15 апреля с. г., по приглашению Католикоса Патриарха Всея Грузии, а также—епархиального начальника Грузинской армянской епархии епископа Геворга Серайтаряна, Его Святейшество посетил в Грузию. В статье говорится о визитах Его Святейшестаа, церковных торжествах, имеющих место в армянских и грузинских церквах, встречи с официальными представителями государственных властей, а также о возвращении в св. Эчмиадзин

Под рубрикой «В Первопрестоле» изображены торжества, происходившие в св. Эчмиадзине в праздник св. Воскресения—Патриаршее служение и проповедь, взаимные поздравления в Патриарших покоях 28

Сюда входит также очерк о проведении в Кафедральном соборе Божественной литургии и Панихиды в память 65-летия армянского геноцида

С 22 по 23 апреля, в Актовом зале Эчмиадзинской духовной академии, в присутствии Его Святейшества происходит защита дипломных работ выпускников дух. академии 1978—1979 года

Церковные торжества и служения в Кафедральном соборе за м-ц апрель

Следующий обзор журнала посвящен избранию нового предводителя Иракской армянской епархии, архимандрита Авака Асатуряна и торжествам—имеющих место по этому случаю 47

Ключарь Кафедрального собора, архиепископ Июсик Сантурян с 29 марта по 10 апреля посетил армянскую общину Багдада (Иракская Республика). В журнале рассказывается об устроенных общиной торжествах, служениях и визитах архиепископа Июсика 48

Проф. Ашот Абрамян представляет читателю некоторые рукописи—доклады об армянском геноциде, предводителя Болгарской армянской епархии, епископа Гевонда Дуряна Католикосу Геворгу Пятому. В письмах говорится о политике уничтожения Западных армян турецким правительством. Описываются факты избиения, насилия, переселении, похищении и т. д. . . . 51



„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(APRIL 1980)

The April 1980 issue of the „Etchmiadzin" journal opens up with the sermon of His Holiness the Catholicos of All Armenians Vasken I, delivered in the Cathedral of Holy Etchmiadzin, on the occasion of Holy Easter (April 6). 3

EDITORIAL: The Armenian people and its Mother Church.

This editorial deals with the role and mission of the Mother See of Holy Etchmiadzin and the Armenian Church in the life of the Armenian people. This editorial is also a response against the publications of a few Armenian Catholic clergymen who attack the Mother See of Holy Etchmiadzin and the Armenian Church in general, on false historical grounds. . . . 6

The Encyclicals of His Holiness the Catholicos about granting the medals of „St. Gregory the Illuminator" First Order, „St. Sahag and St. Mesrob" and „St. Nerses Shnorhali" to prominent Armenians who have made important donations or have served the Armenian Church or the Mother See of Holy Etchmiadzin for long years. 10

Gongradulations exchanged between His Holiness the Catholicos and the Spiritual Heads of sister Churches on occasion of Holy Easter. 19

The congradulations of His Holiness the Catholicos, on occasion of Holy Easter, sent to the three hierarchic Sees of the Armenian Church, to the Diocesan Primates and the Armenian Church communities. 22

The telegrams exchanged between His Holiness the Catholicos and the General Secretary of the World Council of Churches, Dr. Philip Potter on occasion of the 65th anniversary of the Armenian Genocide. 24

The Encyclical of the deceased Catholicos His Holiness Kevork V, about forming a Commission of Brotherly Assistance at the Mother See of Holy Etchmiadzin, on December 28, 1914, for assisting the distressed and homeless refugees who have arrived to Holy Etchmiadzin from Western Armenia.

On 1914, in the eastern parts of Western Armenia, the acts of terror had already begun, and on 1915 deportation had become massive, and the hasty escape of the misfortune-bearers to Eastern Armenia commenced.

In the winter of 1914 these acts of terror were only the beginning of the coming 1915 Great Genocide. 25

The official visit of His Holiness the Catholicos of All Armenians, Vasken I, to Ilia II, the Patriarch-Catholicos of All Georgians.

On April 11—15 of the current year, His Holiness the Catholicos of All Armenians visited Georgia with the invitation of the Patriarch-Catholicos of All Georgians and also with the invitation of the Primate of the Armenian Diocese of Georgia, His Grace Bishop Kevork Seraytarian.

The article covers the visits of His Holiness, the Divine Liturgies celebrated in the Georgian and Armenian churches, meetings with official state personalities, receptions and the return to the Mother See of Holy Etchmiadzin. 28

Under the heading „In the Mother See" are covered the Divine Liturgy celebrated by His Holiness and the delivered sermon, on the occasion of Our Lord's Holy Resurrection.

Under the same heading are described also the celebration of the Divine Liturgy on occasion of the sixty fifth anniversary of the Genocide and the requiem service for the rest of the souls of the martyrs.

On April 22—23 the 1978 and 1979 graduates of the Theological Academy presented and made a defence of their thesises, in the presence of His Holiness, and received their certificates.

This issue covers also the religious ceremonies and Divine Liturgies celebrated on April. 42

The next topic deals with the election of the Primate of the Armenian community of Iraq. Right Reverend Father Avak Assadourian, and with the festivities occuring in Baghdad on that occasion. 47

Archbishop Housig Santoûrian between March 29 and April 10 visited the Armenian community of Baghdad and the occuring ceremonies, celebrated Divine Liturgies and spoken sermons are here described. 48

Prof. Ashot K. Abrahamian has presented the yet unpublished reports of Bishop Ghevond Tourian, the former primate of the Armenian community in Bulgaria, addressed to His Holiness the Catholicos of All Armenians Kevork V, on occasion of the Armenian Genocide.

The reports speak about the policy of the Turkish government to exterminate the Western Armenians, presenting very tragic details about the Armenian massacres, forced deportations, rapes, abductions, and other horrible deeds. 51



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(AVRIL 1980)

Le numéro d'avril de la revue mensuelle „Etchmiadzine" s'ouvre par le texte de l'homélie que Sa Sainteté Vasken Ier a prononcée le 6 avril 1980 dans la cathédrale de Ste. Etchmiadzine à l'occasion de la fête de Pâques. . . 3

Article éditorial intitulé: Le peuple arménien et sa Mère Eglise.

L'éditorial est consacré au rôle que l'Eglise apostolique arménienne et son Saint-Siège ont joué dans la vie du peuple arménien. L'éditorial est en même temps une amère critique des ouvrages et articles malintentionnés et historiquement inexacts que quelques ecclésiastiques arméniens catholiques ont fait publier au cours de ces dernières années contre l'Eglise apostolique arménienne et le Saint-Siège d'Etchmiadzine. 6

Encyclique de Sa Sainteté annonçant l'attribution des ordres de „Saint Grégoire l'Illuminateur", „Saint Mesrop-Saint Sahak" et „Saint Nersès Chnorhali" à certaines personnalités laïques qui ont fait des donations importantes au Saint-Siège d Etchmiadzine et qui ont, par leurs services, largement contribué à la prospérité des églises arméniennes de la diaspora. . . . 10

Echange de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les chefs des Eglises soeurs à l'occasion dc la sainte fête de Pâques. 19

Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois Sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise arménienne à l'occasion de la fête pascale. 22

Echange de télégrammes entre Sa Sainteté et Dr. Philip Potter, secrétaire général du Conseil Oecuménique des Eglises, à l'occasion du 65e anniversaire du génocide des Arméniens. 24

L'Encyclique du feu Catholicos Guévorg V annonçant la nomination au Saint-Siège d'une Commission d'Assistance Fraternelle le 23 décembre 1914 en vue de secourir les émigrés arméniens indigents et sans abri venus à Ste. Etchmiadzine de l'Arménie Occidentale.

En 1914 dans les régions orientales de l'Arménie Occidentale avaient déjà commencé les terreurs et en 1915 la déportation en masse et la fuite des sinistrés arméniens vers l'Arménie Orientale. Ces terreurs de l'hiver de 1914 étaient le prélude du grand génocide qui devait survenir en 1915. . . 25

La visite officielle de Sa Sainteté Vasken Ier à Sa Sainteté Ilia II, Patriarche-Catholicos de toute la Géorgie.

Un article décrit cette visite effectuée en Géergie du 11 au 15 avril sur l'invitation de Sa Sainteté Ilia II et de Mgr. Guévorg Séraïdarian, prélat des Arméniens de Géorgie, et il donne des informations détaillées sur les rencontres de Sa Sainteté avec des hommes d'Etat, ses visites aux égtises

géorgiennes et arméniennes, sa participation aux cérémonies religieuses et son retour au Saint-Siège d'Etchmiadzine. 28

Sous la rubrique „Nouvelles du Saint-Siège" sont publiées des informations concernant:

a) Les solennités de Pâques au Saint-Siège.

b) La célébration de la sainte Messe dans la Cathédrale et l'homélie de Sa Sainteté à l'occasion de la fête de la Résurrection de notre Seigneur Jésus-Christ, puis félicitations dans la résidence du Catholicos.

c) La célébration de la sainte Messe dans la Cathédrale suivie d'une cérémonie de requiem à l'occasion du 65e anniversaire du génocide de 1915.

d) La soutenance de thèses des 9 étudiants promus de l'Académie Théologique de Ste. Etchmiadzine dans la salle de l'Académie le 22 et 23 avril et l'obtention de leurs diplômes en présence de Sa Sainteté.

Sous la même rubrique sont publiées également des informations concernant les cérémonies religieuses et les saintes messes célébrées dans la Cathédrale au mois d'avril. 42

Dans le présent numéro un article est consacré à l'élection du Révérend Père Avak Assatourian comme prélat des Arméniens de l'Iraq et aux cérémonies religieuses qui ont eu lieu à cette occasion à Bagdad. 47

Du 29 mars au 10 avril l'archevêque Houssik Santourian, sacristain de la cathédrale de Ste. Etchmiadzine, a rendu visite aux communautés arméniennes de l'Iraq. Un article est consacrée à cette visite et à toutes les festivités et cérémonies religieuses qui ont été organisées en l'honneur de Mgr. Santourian à Bagdad et dans d'autres villes du pays. 48

Le professeur Achote Abrahamian a présenté et commenté un certain nombre de rapports inédits de l'évêque Ghévonde Dourian, ancien prélat du diocèse des Arméniens de Bulgarie, adressés au feu Catholicos Guévorg V à l'occasion du génocide des Arméniens.

Ces rapports démontrent la politique d'extermination menée par le gouvernement turc contre les Arméniens de l'Arménie Occidentale et donnent de tristes informations sur les massacres, les émigrations forcées, les viols, les ravissements des Arméniens et sur d'autres actes d'atrocité ahurissante. 51



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում 3

ԹՄԲԱԳՐԱԿԱՆ—Հայ ժողովուրդը և իր Մայր Եկեղեցին 6

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Իրաքի հայոց Ազգային Կեդրոնական Վարչության նախագահ դոկտ. Հասրաթ Միքայելյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով պարգևատրելու մասին 10

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը տիար Ակրահամ Ծահինյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով պարգևատրելու մասին . . 11

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Բելգրութի Հայ Բարեգործական Ընդհանուր Միության «Դարուհի Հակոբյան» վարժարանի քառասնամյակի առթիվ 12

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Փարիզի հայոց Դպրոցասեր Տիկնանց վարժարանի տնօրենուհի օրիորդ Հռիփսիմե Գարագաշյանին «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին 13

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Բաղդադի հայոց Հայ Երկսեռ Երիտասարդաց Միության «Կոմիտաս» երգչախմբի ղեկավար տիար Կարապետ Քիշմիշյանին «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին . 14

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Բաղդադի հայոց Տիկնանց Աղքատախնամ Մարմնի ատենապետուհի տիկին Աննա Զոպանյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին 15

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգեհոնահար տիկին Էոժեն Ստեփանյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին 16

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը Դանիայի Կանանց Միսիոներական Ընկերության նախագահ սարկավագուհի քույր Քրիստեն Վինդին և պատասխանը 17

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 19

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 22

Հայոց Հայրապետի և Ժնևում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրի միջև փոխանակված հեռագրեր Ապրիլյան եղեռնի վաթսունհինգամյակի առթիվ 24

Երուսաղեմի Տ. Տ. Գևորգ Ե կաթողիկոսի սրտառուչ կոնդակը Մայր Աթոռում 1914 թվականի դեկտեմբերի 28-ին Եղբայրական Օգնության Կարգադիր Հանձնաժողով նշանակելու մասին՝ Արևմտյան Հայաստանից Ս. Էջմիածին հասած թշվառ և անօթևան հայ գաղթականներին օգնելու համար . . . 25

ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ԱՐԱԲԱՋՅԱՆ—Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի այցելությունը Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ին 28

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 40
Սուրբ Զատկի տոնը Մայր Աթոռում 41
Ապրիլյան եղեռնի վաթսունհինգերորդ տարելիցի նշումը Մայր Աթոռում . 42
Դիպլոմային աշխատանքների պաշտպանություն հոգևոր ճեմարանում . . 45
Եկեղեցական բեմ. լուրեր 47
Իրաքի հայոց թեմի առաջնորդի ընտրություն 48
Հովվական այցելություն Իրաքի հայոց թեմին 51
ՊՐՈՖ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ—Մի քանի վավերագրեր Մեծ եղեռնի արյունոտ օրերից 57
„Эчмиадзин" официальный орган Эчмиадзинского первопрестола . . 59
„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 61
„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 61

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳԱՎԱՌԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՍՊԱՐԵԶ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 5.5.1980 թ.: Ստորագրված է տպագրության 20.6.1980 թ.:
Տպագրական 4 մամուլ+5 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 470:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1980 թ.